չխնդրեց, այլ խնդրեցն մտրալ անուանելով ան-
դառնալի կերպով հրաժեչտ տալու մտաղիւր ըլ-
լալը յայտարարեց:

Ըստ որում այսպիսի Վարչական խնդիր
երկարաձգելը վնասակար է Աղգին ըստ ամե-
նայնի:

Կառաջարկեմք որ:

Ժողովը անմիջապէս ընդունի Քաղ. Ժողո-
վոյ հրաժարականը և տեղը նոր Ժողով մը կազ-
մելու ձեւնորկէ, այնպիսի ժողով մը որ՝ Աղ-
գին մէջ իրր Վարչութիւն գործելու բարոյական
ոյժն ու համազումն ունենայ, և խնդրէ անցեալ
տարուան գործառնութեանց համարատուութիւ-
նը, որպէս ղի Աղգային Ժողովն ըստ արդեանց
նորա կռէ իր շնորհակալութեան քուէն, որում
արժանացած սխալ ըլլայ անշուշտ իր միամեայ
ազգասիրական աշխատութեամբը:

Ատենապետ և Տեղեկարեք

27 Մայիս 1877 Մ. ԵՊԻՍԿՈՊՈՍ ԻԶՄԻՐԼԵԱՆ

Ատենապետը Ա. Ա. ՊԷՇԻՐԵԱՆ
Ք. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ահաւաստի խնդիրը մեր անցեալ նիստի վիճարանութեանն ետե սյտոր սոյն տեղեկագրով վերատին կը ներկայանայ. հարկաւ մէկ քանի հազի պիտի խտտին թերուզմ, սակայն վիտասայ կարգը պահելու համար կը հրաւիրեմ խտտիլ ուղղութեանն որ սոյն մէջ անուն նին նշանակել տան, որպէս զի վիճարանութիւնը չճատարի և շուտ վերջանայ, որով կարելի լինի անցնիլ Օրակարգի երկրորդ խնդրոյն, որ կենսական խնդիր մ'է. սոյն է Գաստիարակութեան խնդիրը: [Պահ մը յուրեկե՛ ետե.]

Եթէ բնաւ խտտող չկայ. Իրաւաստութեան զիւանի տեղեկագրոյն եզրակացութիւնը քուէարկութեան պիտի ենթարկեմ:

[Գարձեալ յուրեկե՛]

Սոյն սահուն մի քանի երեսփոխանաց ըստորագրութեամբ զիր մը արուեստաւ զիւանին. Ատենապետ փաշան կարդայ զայն՝ որ է.

Վ. սեմ. Ատենապետ Փաշա

Կառաջարկեմ որ Քաղ. Ժողովոյ հրաժարականի խնդիրը զազանի քուէի գնելու քարէհանիր:

- 3 Յունիս 1877
- | | |
|--------------------------|-------------------|
| Մնամբ Խոնարհ | Ծառայ |
| Բարրոյ Մ. Վերքահայրանեան | Մեղրեան Փարիսպեան |
| Վարդանեան Վերք | Տորոտ Փարիսպեան |
| Ս. Խոճասարեան | Պ. Յ. Թորգոսեան |
| Քարտիրոս Տիգրեան | |

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ըստ որում բնաւ մէկը մտադիր է վիճարանութեան մտնել, կը մնայ ինձ պարզապէս իրաւաստութեան զիւանի տեղեկագրոյն եզրակացութիւնը քուէի գնել: Եւ ըստ որում զազանի քուէարկութիւն առաջարկողներ կան, հետեւապէս քուէարկութիւնը զազանի ընել տալ պարտաւոր եմ:

Ուրեմն քուէթուղթ պիտի բաժնել տամ. Քաղաքական ժողովոյ հրաժարականը ընդունողն այն և չընդունողն ոչ պէտք է զրէ:

Գարձեալ՝ սոյն միջոցին մի քանի երեսփոխանաց ստորագրութեամբ զիր մը արուեստաւ զիւանին. Ատենապետ փաշան կարդայ զայն որ է.

Վ. սեմաշուք Ատենապետ Փաշա Ազգային ժողովոյ

Որովհետեւ 1870 թուականին ի վեր եկած զայսմ Վարչութիւններն թէպէտ իրենց համարատուութիւնը Ազգային ժողովոյ ներկայացուցած են, բայց Ազգային ժողովը մինչև հիմա ըստ օրինի համարատուութիւն կատարած չըլլալուն զիտուած չէ թէ որ վարչութիւնը իր սրտանին սրտահանութիւնն անթերի կատարած և Ազգային շահերն ու իրաւունքները խզճիւ պաշտպանած է, և կամ ընդհակառակն՝ որ վարչութիւնը անհոգ գտնուած և իր սրտանին սրտպահանութիւններն խզճիւ և ըստ օրինի անթերի կատարած չէ:

Եւ որովհետեւ օրինաւոր համարատուութիւնը երեսփոխանութեան անկատարելի իրաւունքն և Սահմանադրութեան մը հոգին չ. ուստի կառաջարկեմ որ 70 էն ի վեր կազմուած Վարչութեանց և ներկային համարատուութիւնն ըստ օրինի կատարուի արդէն կարգեալ յանձնարարին միջոցաւ, որպէս զի զիւաններ թէ մեր Վարչութիւններն ինչպէս վարուեր են և ինչ ծուայութիւններ առ Ազգի մատուցեր են և սոյնպէս կարենանք նոր Վարչութեան մ'ընտրութիւն կատարել:

- 3 Յունիս 1877
- | | |
|----------------|---------------|
| Մ. Ալիքանեան | Մ. Ալիքանեան |
| Ղ. Վարդարանի | Մ. Գալստասեան |
| Հ. Քաղապուհեան | Յ. Ֆէլեքեան |
| Ն. Գարագաշ | |

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Զիս ալ ստորագրեցէք այդ գրոյն ներքև:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ես ալ, ամենա ալ կատարադրեմք:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ժողովը՝ Քաղաքական ժողովոյ հրաժարական խնդրոյն վրայ վիճարանութիւն ընելի կը զգուշանայ մեծ իմաստութեամբ:

վան զի արդէն անցեալ նիստին բաւական վիճարանութիւն եղաւ: Այժմ մեր նախորդինից զիւանին Տեղեկագիրը կ'առաջարկէ որ ընդունինք Քաղաքական ժողովոյ հրաժարականը. բայց առաջարկող կայ՝ որ ըստ որում 70 թըուականին ի վեր վարչական համարատուութիւններ կան առանց քննութեան մնացած, նախ անոնց քննութեան հասկընան՝ որ Վարչութիւնն օգտակար ծառայութիւն մատուցած է և ո՛րը մնաստիար, որպէս զի զո՛վ ընտրելիքնին զիւանն. ըսել կուզեն թէ Քաղաքական ժողովոյ հրաժարականն ընդունուի ալ նէ՛ նորը չընտրուի առ այժմ, մինչև համարատուութեանց քննութեան աւարտիլը:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Մեր թէ որ ձայնակցեցանք՝ անոր համար էր որ 70 էն ի վեր մատուցուած վարչական համարատուութիւնները քննուին. և մէյ մ'ալ սրահաս մնացած համարատուութիւններ կան, անոնք ալ գան՝ ամենքն ամբողջանան, և ոչ թէ այդ սրտածաւառ Քաղաքական ժողովոյ նոր ընտրութիւնը ետ մընայ. այդ մասը ընթերցման տուեն չէինք հասկըցեր, որուն չենք կրնար ձայնակցիլ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Բայց հիմա խնդիրը նոր Քաղաքական ժողովն ընտրելու կամ չընտրելու կամ համարատուութիւններն ընելու կամ չ'ընելու վրայ չէ. այլ արդի Քաղաքական ժողովոյ հրաժարման վրայ է. կը հրաւիրեմ երեսփոխան էֆէնդիներն՝ որ իրենց քուէթուղթը սրտատուեն. հարկ կը համարիմ նաև յայտ առնել թէ Քաղաքական ժողովոյ անդամ եղող և երեսփոխանները ըստ կանոնաց չ'են կրնար մատակցիլ այս քուէարկութեան:

Անմիջապէս քուէարկութիւնն սկսաւ. և քուէհամորի քննիչ կարգեցան՝

- | | |
|---------------------------------------|-------------|
| Յովհաննէս Լ. Ֆէնտի | Յովակիմեան |
| Քրիստոստուր | Ղաղարսեան |
| Ստեփան | Փարիսպեան |
| Յարութիւն | Նորատուհեան |
| Քուէհամորը կատարուելով արդիւնքն և զաւ | |

Թիւ քուէարկուայ	59
Այո՛	Քուէ 38
Ոչ՛	20
Պարտալ	1

Հետեւապէս Ժողովը 20 քուէի զէ քուէիւք ԸՆԴՈՒՆԵՆ Քաղ. Ժողովոյ հրաժարել և ՈՐՈՇԵՑ նոր Քաղաքական ժողովոյ ընտրութեան ձեռնարկել:

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — [Յոտն կանգնելով] Որովհետեւ ևս ալ անցեալ շաբթու տուած էի իմ հրաժարականս, քանի որ Քաղաքական ժողովոյ հրաժարականն ընդունուեցաւ և նորը պիտի ընտրուի, ուրեմն իմ հրաժարականս ալ ընդունելով՝ նոր Պատրիարք մը ընտրեցէք:

Զայս ըսելէ ետև անմիջապէս Նորին Աբրահամութիւնը մեկնեցաւ խորհրդարանէն:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Յաւայի է որ Սրբազան նախագահին այսպէս անակնկալ կերպով մեզ կը ձգէ կերթոյ, և այնպիսի ասան մը յորում պէտք է միատեղ գործէինք. բայց կը յուսամ որ առժամանակեայ է իւր հրաժարելը, և կը յաջողինք յետս կոչել տալ, ինչպէս որ քանիցս ետ առած է. ուստի կառաջարկեմ պատգամաւորութիւն մը զրկել ի դիմաց Ժողովոյս, որ Նորին Սրբազնութեան մեզ այսպէս տուած հարուածին վրայ մեր ցաւը յայտնէ և խնդրէ որ համոզէ ի հրաժարականը ետ առնել. և եթէ չը յաջողի՝ սրտածառներն ստուգէ և կամ Նորին Սրբազնութեան և կամ իր կողմէն գրով մատուցանէ Ժողովիս, որպէս զի վիճարանութեան հիմն ունենանք. և միւս կողմէ առժամանակեայ նախագահութեամբ երիցազոյն եպիսկոպոսի, Ժողովն իր գործը շարունակել պէտք է ըստիս:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Երկու քան առաջարկեցիք՝ Աէնասապետ փաշայ. մէկը կընդունիմ, այն է՝ պատգամաւորութիւն մ'երթոյ ի դիմաց Ժողովոյն՝ Նորին Սրբազնութեան այսպէս արտաբայ կարգի ձեռով մեկնելուն սրտածառն իմանալու համար. իսկ միւսն՝ այն է նիստերնիս շարունակել, անցարմար և քաղաքաւորութեան

դէմ կը համարիմ. ուստի և կառաջարկեմ որ Ժողովը սրահ մը դադրեցնէ խը նիստը՝ մինչև Նորին Սրբազնութեան ըսելիքն ու ընկերն ի մայուր:

ԻԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — Կը կրկնեմ Օգտին Էֆէնտի առաջարկութիւնը:

ՄԱՌԻԿՈՆԵԱՆ Մ. ԷՖ. — Ես կը կարծեմ թէ Նորին Սրբազնութիւնը համոզել կարող ըլլալու համար նախ որոշել պէտք է թէ հրաժարեալ Քաղ. Ժողովոյ անդամք վերընտրելի՞ են թէ ոչ. եթէ վերընտրելի ըլլան, կը յուսամ որ պատգամաւորութեան սրաշտոնը ղիւրութեամբ կը յաջողի:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Երեկէր որ միտքս բացատրեմ և չ'ցրտիք այլ գործերն շարունակելը ըսելուս պատճառը հասկըցնեմ: Ենթադրելով որ Սրբազան Պատրիարքն զմեզ ՚ի ժողով հրաւիրելէն ետև հրաժարագիր դրիւմ ըլլար այսօր, չէ՞ որ պիտի նիստ ընէինք. ահա Սրբազանը հրաժարական տուաւ եթէ ոչ գրով այլ բերնով. և յայտնի է որ պատրիարքական հրաժարականի խնդիրն շտապու չլուծուիր. կանոն ունինք ձեռքերնիս, որոյ համեմատ մասնաւոր անօրէնութիւնք կան ՚ի գործ դնելու. անոր համար առժամանակեայ նախագահով մը գործերն շարունակելը ըսի. այսօր Քաղ. Ժողովն ինչ հրաժարեալ է և Սրբազան Պատրիարքն ինչ հրաժարիմ ըսելով մեկնեցաւ. ըսել է որ միայն Արծնական ժողովն կոյ կանգուն և Աղգալին Ժողովն կը ներկայացունէ զԱղգալին հեղինակութիւն. եթէ մեր ալ ձգենք երթանք՝ մի թէ պատասխանատուութեան տակ չե՞նք մնար. միայն այսօրուան գործերն շարունակելու համար է առաջարկութիւնս. իսկ գալիք նստին համար չգիտեմ ՚ի նշողս պիտի ըլլայ: Պաշտով Մամիկոնեան Էֆէնտի յարուցած խնդրոյն՝ ըսա իմ կարծեաց այս անգամ Քաղ. Ժողովոյ համար ընտրելիները միայն մէկ տարուան համար են, և որովհետև հրաժարողներն սրայմանաժամին ըրայցս չեն, ուստի և վերընտրելի կրնան ըլլալ. մեր Կանոնադրութեանը զմեզ տալուսից

տղատած է և մեր բռնելու ճամբան դժած է մեր առջև. վերջապէս դարձեալ կը կրկնեմ, այս վայրկեան մէջ ազգային իշխանութիւնը ներկայացունող սա տեսանն է, ուստի պէտք չէ որ ցրուինք. այլ շարունակելը առժամանակեայ նախագահ մը դնելով. միւս կողմէ պատգամաւորներ դրիւնք՝ որ երթան Սրբազան Պատրիարք Հօր մեր ցառը յայտնեն և աղաչեն սրազատին՝ հրաժարականն ետ առնել տալու համար. և եթէ չ'յաջողին՝ պատճառներն հասինան և մեզ հաղորդեն: Ուստի՞ եթէ կը հաճի Ժողովը, պատգամաւորներն ընտրենք. երկու եկեղեցական և երկու աշխարհական բաւական են՝ կարծեմ:

ԳՐԱՍԷՐԵԱՆ Գ. ԷՖ. — Օգտին Էֆէնտի ըսածը կընդունիմ. նմանապէս կընդունիմ Ատենապետ փաշային այն խօսքը՝ թէ չցրուինք, որպէս զի կարենանք պէտք եղածն ընել:

ԻԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — Ես դարձեալ կը կրկնեմ Օգտին Էֆէնտի առաջարկութիւնը, միւս անգամայն Ատենապետ փաշային ալ չմերժելով. կըսեմ որ շարունակելը՝ բոց սրահ մը դադար տալով, մինչև որ պատգամաւորութիւնը պատասխան մը բերէ:

ԷՔՍԷՐՃԵԱՆ Տ. ԷՖ. — Կառաջարկեմ որ պատգամաւորութիւն երթայ, բոց Մայր ղիւանն ալ միտակող, և Ժողովն առժամանակեայ ղիւանով մը շարունակէ մինչև որ պատգամաւորութիւնը վերադառնայ:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Իմ ըսածս սխալ հասկցուեցաւ. ես չըսի որ Ժողովը ցրուի, այլ հինգ վայրկեան դադար առնու մինչև հասկընանք Նորին Սրբազնութեան հրաժարման խնդրոյն ինչ գոյն առնելիքը, հրաժարման՝ որ ինչպէս առենապետ փաշան ըսաւ, ցաւալի է որ առանկ անակնկալ կերպով մը կը սրտասի. մանաւանդ այս առաջին անգամը չէ որ Նորին Սրբազնութիւնը կը հրաժարի. ինչ է այս յաճախ հրաժարմանց պատճառը Սահմանադրական Պատրիարքի մը. կրնայ շատ բան ըսուիլ բոց այսօր ժամանակը չէ: Թէ և անցեալ նստին

յայտնեց Նորին Սրբազնութիւնը թէ Քաղ. Ժողովն իրեն դժգոհութիւն ունենալուն կը հրաժարի. բոց երբ Քաղ. Ժողովոյ կողմէն Ծանարագ Էֆէնտի յարարարեց թէ Պատրիարքն գոհ են, Նորին Սրբազնութիւնը չփոխեց թէ իրենց մէջ անհամաձայնութիւն կոյ և թէ իր հրաժարումն անպատճառ Քաղ. Ժողովոյ հրաժարականին հետ կատակցութիւն ունի. ուստի Քաղ. Ժողովոյ հրաժարումը սրազ հրաժարական համարուեցաւ նոյն օրն, և այսօր ալ որ և է աշատութիւն կամ ազգայնութիւն մը չըլլալու համար երբ դադարի քաւարիութիւն առաջարկուեցաւ, Նորին Սրբազնութիւնը լուծութիւն սրահեց, մեր ալ բռնիս տալինք առանց ղիւնալու թէ Նորին Սրբազնութիւնն առանկ անակնունկի կերպով մը պիտի առնու քաւ: Ուստի նորէն կըսեմ թէ առանց ցրուելու, սրահ մը միայն նիստը դադրեցնենք, մինչև որ Սրբազանին յեղակարծ հրաժարման պատճառներն ի մանանք:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ըստ որում սրազամաւորութիւն դրիւնու մասին կարծեաց տարբերութիւն չկոյ, կառաջարկեմ որ նախ պատգամաւորներն ընտրենք, եթէ բաւական կը համարուի երկու եկեղեցական և երկու աշխարհական, ընդ մեկը շորս հողի:

ԻԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — Երեքական ըլլալ կառաջարկեմ, ընդ մեկը վեց հողի:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Շատ աղէկ. եթէ ղիւանին ընտրածները կընդունին՝ կառաջարկեմ որ եկեղեցականներն Տ. Հմայեակ և Տ. Յակոբ վարդապետները և Տ. Սահակ քահանայն, և աշխարհականներն Աղաբէկեան, Նորատունկեան Յակոբ և Իւթիւճեան Կարապետ Էֆէնտիները բարեհաճին երթալ, սրաշտոն ունենալով Ժողովոյ զարմանքն ու ցառը յայտնելու, հրաժարման պատճառները հարցնելու. և վերջապէս համոզել ջանալու. որ հրաժարականն ետ առնէ, և եթէ չ'յաջողին՝ պատճառներն ժողովիս տեղեկագրելու:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Սրբազան Պատրի-

արք Հօր հրաժարականը չընդունելով սրազամաւորութիւն դրիւնու համար քաւ կառաջարկեմ:

Այն առաջարկութիւնն ուրիշներէ ալ կրկնուելով, Ատենապետ փաշան քաւի դրաւ: Ժողովն 3 քաւի հակառակ ամենամեծ մասով ՁԸՆԳՈՒՆԵՑ Սրբազան Պատրիարք Հօր հրաժարականը:

ՄԱՔՍՈՒՏԵԱՆ ՍԵՊՈՒՆ. ԷՖ. — Ես կարծեմ թէ Ժողովն դադար տալը խոչնդով չէ. դատարարութեան խնդիր ունինք, առանց դադար տալու անով դրալինք առ այժմ. միւս կողմէ պատգամաւորութիւնն ալ երթայ Սրբազան Պատրիարքին. տարակոյս չունիմ որ Նորին Սրբազնութիւնն խը ազգայնութեան համեմատ պիտի համոզուի հրաժարականն ետ առնելու. կը կարծեմ որ մեր հրաժարելուն վրայ ցառ գզալով ինք ալ կը հրաժարի:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ժամն 9 է արդէն. 10ին քառորդ մնալով առեանը պիտի դոյնեմ, որպէս զի խրատանջիւր որ կարող ըլլայ ժամանակին երթալ շոգենալի հասնիլ: Ուստի պատգամաւորներուն կաղաչեմ, որ բարեհաճին փութալ իրենց սրաշտոնը կատարելու: Ըսուեցաւ որ Մայր ղիւանն ալ մէկտեղի. ես չեմ կրնար երթալ, վասն զի իմ սրաշտոնս այսօր այստեղ կենալ է. իմ տեղս Նուրեան Էֆէնտին կառաջարկեմ, որ արդէն փոխ—Ատենապետ է, և կրնայ Մայր ղիւանին կողմէ ինք փոխանորդել: Ինչպէս որ ըսի, պատգամաւորութեան սրաշտոնը պիտի ըլլայ նախ՝ Ժողովոյ զարմանքը և վերջը յայտնել, երկրորդ՝ հրաժարման պատճառները հասկընալ կամ գրով խնդրել և մեզ հաղորդել որպէս զի եթէ զարմանի մը պէտք կոյ՝ մտածենք, և երրորդ՝ համոզումը խնդրել, որպէս զի հրաժարականն ետ առնէ:

Տ. ՅԱԿՈՒՎ ՎՐԴՊՏ. — (Սեղան կրօն. Ժողովոյ) Թէ և շնորհակալ եմ որ պատգամաւորութեան սրաշտոն կը յանձնուի ինձ. սակայն երեսփոխան չեմ, և միթէ առանց երեսփոխան ըլ-

Լալու կրնամ այդ պաշտօնը կատարել :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Այո, կրնաք երթալ իբրև Աղային Ժողովի անդամ, և Նուրեան էֆէնտի ալ յանուն Մայր դիւանին պիտի ընկերակցի ձեզ :

Ընտրեալ պատգամաւորք մեկնեցան երթալ Սրբազան Պատրիարք Հօր ի Պատրիարքարան :

Ժողովն այս միջոցին քառօրէ մը դադար առնելէ ետև վերատին շարունակեց :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Թէ և մեր պատգամաւորութիւնը տակաւին չը վերադարձաւ, և չը գիտենք թէ ի՞նչ արդիւնք պիտի ունենայ. բայց ի՞նչ ալ ըլլայ արդիւնքը, Ժողովին պարտաւորութիւնն է ազգին գործոց ուղղութեանը հսկել. որ և է կերպով ատենապետաց դիւանը գործ ունի այժմ, քանի որ նոր Քաղաքական ժողովոյ ընտրութեան խնդիրը կայ. ութ դիւան մէկ մէկ հօգի ցոյց տուած են իբրև ատենապետ, որոնք Ժողովոյս ատենապետի նախագահութեամբ ատենապետաց դիւան կը կազմեն. ասոնք ընտրելոց ընտրեալք են, ուստի և մանրանկար կերպիւ մը զԱ.ԳԳ. Ժողովը կը ներկայեն : Ըստ որում ես յառաջիկայ շարթու ճանապարհորդ եմ և չպիտի կրնամ նախագահել ատենապետաց դիւանին, Նուրեան էֆէնտին իբր գեր — Ատենապետ պէտք է գումարէ ատենապետաց դիւանը՝ Քաղ. Ժողովոց ընտրելեաց ցուցակը պատրաստել տալու համար : Միւս կողմէ Պատրիարք Սրբազան հօր հրաժարման խնդիրն ի՞նչ դոյն ալ որ առնէ, ատենապետաց դիւանին կը պատկանի խնայել Նորին Սրբազնութեան թէ ազգացին գործերն երեսի վրայ չմնալու համար պարտաւոր է շարունակել իւր պաշտօնը՝ մինչև որ իւր հրաժարման խնդիրը լուծուի : Ար վստիմամ որ Քաղաքական ժողով չըլլալով, միւս խորհուրդներն ալ ինչպէս կը լինի, հրաժարած ըլլալով, և Պատրիարք Սրբազանն ալ պաշտօնը ձգելով՝ ազգային գործերն անխնայանկար միճակի մէջ չլինան. ուստի պատասխանատուութեան տակ չմնալու համար կառավարիւմ որ ատենապետաց դիւանը միանալով՝ ըստ կերպովս գործէ :

Ա.Լ.ԻՔՍԱՆԵԱՆ Մ. ԷՖ. — Ներելի՞ է արդեօք հարցում մ'ընել. ըսիք թէ ատենապետաց դիւանին յանձնենք՝ որ Քաղաքական ժողովոց ընտրելեաց ցուցակը պատրաստէ և միանգամայն Սրբազան Պատրիարքին հրակէր կարգոյ՝ մինչև իւր հրաժարման խնդրոյն լուծուի շարունակելու : Միթէ Նորին Սրբազնութիւնն իւր հրաժարման վրայ պիտի պնդէ. շատ կարելի է որ հրաժարականը պիտի ետ առնու :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ես համոզուած եմ որ Սրբազանն իւր հրաժարականը ետ պիտի առնու, բայց ո՛չ այնքան շուտ. իսկ ազգացին նաւրբն ատանց նաւուղիցի ձգել չըլլար :

Տ. ՄԱՏԹԷՈՍ ԵՊՍ. — Սրբազան Պատրիարքն իւր հրաժարականը թէ ետ առնէ և թէ ոչ, ատենապետաց դիւանը գիտէ իւր ընելիրը :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Սրբազան Պատրիարքը՝ ըստ կանոնի երբ պէտք ըլլայ՝ կրնայ կոչել ի խորհուրդ ատենապետաց դիւանը և կամ նախաքննիչ դիւաններէն, ո՛րն որ կամի :

Ա.Լ.ԻՔՍԱՆԵԱՆ Մ. ԷՖ. — Ատենապետ վաչան վտահ էմ, կըսէ՞ որ Սրբազան Պատրիարքն իւր հրաժարականը պիտի ետ առնու. երեսօխոսաններէն շատերն ալ նոյն վտահութիւնը կը յայտնեն. ես էի միայն որ Նորին Սրբազնութեան հրաժարման ընդունելութեանը համար քուէ տուի. և գիտէ՞ք ինչո՞ւ, վասն զի Սրբազանը քանի քանի անգամներ է որ կը հրաժարի, և ատանկ մերթ ընդ մերթ հրաժարելուն պատճառն ի՞նչ է արդեօք :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ես չգիտեմ պատճառը, միայն համոզուած եմ ըսի որ հրաժարականը պիտի ետ առնու, վասն զի թէ և աղատ մարդ է, բայց միթէ կարելի՞ է հաւատալ որ Ներսէս Սրբազանի պէս ազգասէր մէկը թողու ազգացին նաւր սա տագնաօտալոց փամանակին մէջ տատանիլ, յորձանքի մատուել և թերես երթալ, իչբալ և խորտակիլ քարածոյսերու դարձուելով. ինձի համար անկարելի է հաւատալ ասոր. այս պատճառաւ ըսի թէ հրաժարականն

ետ առնելուն վտահ էմ. իսկ ատենապետաց դիւանն ալ չկրնար և պէտք չէ առանց Սրբազան Պատրիարքին հետ խորհրդակցութեան Քաղաքական ժողովոց ընտրելեաց ցուցակ չլինել, այլ Նորին Սրբազնութեան հետ խորհելով և աշխատելով չլինելու է, զի կանոնն այսպէս կը սահմանվէ, և գիտէ՞ք պատճառը :

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Առաջարկութիւնն իմ շատ բարի է և փամանակին յարմար. միայն բան մը կայ՝ Ատենապետ վաչա, որ պէտք է յայտարարուի. Սրբազան Պատրիարքն ինք եղաւ գործերն ուղղութեանն խտորեցնուը. ապիկոց յանուն պատմութեան արձանագրուելու համար քուէի դրուիլ կառավարիւմ :

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Կերկրորդեմ :

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Շուտով մի երկրորդէք. մեր մէջ մաս մը կայ՝ որ կուզէր կը՝ ուր հանել ազգին մէջ, մեր խոհեմութիւնն արգելք դրաւ ատոնց հանել ուղած կռիւն. երբ չյաջողենք՝ տեսան, գային Սրբազան Պատրիարքը զրդեցին և ըրին չըրին՝ համոզեցին ասանկ բան մ'ընել, վասն զի ատոնք կուզէին որ պատրիարքական խնդիր մը ելնէ ազգին մէջ :

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Կը բողբեմ այդ խօսքերուն դէմ :

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Բայց ազգը չուզէր պատրիարքական խնդիր յարուցանել. թէ որ Սրբազանը պնդէ իւր հրաժարականին վրայ, ինքնին խնդիր յարուցած պիտի ըլլայ : Ժողովը չէր գիտէր թէ Քաղաքական ժողովոց հրաժարականը Պատրիարքին ալ հրաժարականն է. թէ որ Պատրիարքը պնդէր որ Քաղաքական ժողովին հրաժարականն ընդունուելով իրն ալ ընդունած պիտի ըլլար, այն ատեն կրնայինք մէկը միւսին դո՛ւ տալ. թերես այն 58 քուէն՝ որուն 38ը այս և 20ը ո՛չ երաւ, ամենն ալ ո՛չ պիտի ելնէր : Ուստի ես կը խնդրեմ որ արձանագրուի թէ պատրիարքական խնդիր յարուցանողն Ա.Գ. գային ժողովը չէ, այլ Պատրիարքն ինք է եթէ պնդէ իւր հրաժարման վրայ, խարուած ըլլալով

այնպիսի խորհրդակցանքէ, որ խնդիր յարուցանել կուզեն ազգին մէջ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Թէ պէտ և երեսօխոսանք ազատ են ամեն բան ըսել այս ատենին մէջ. բայց պատշաճից օրէնքը և միտնգամայն մեր քաղաքական գիրքն աչրի առջև ունենալով պէտք է կշռենք մեր ամեն խօսքերը : Ես թէ և այս պատրիարքական հրաժարման խնդիրն հարուած անուանեցի, բայց միտք չունիմ պարտաւորաց տեղի տալ. թողունք որ գործն ինչնին իւր ընթացքը ցուցնէ. այժմէն ի՞նչ հարկ կայ այդպիսի քուէ տալու. ուստի այսօրու չէ այս միջադէտը կը դոյնեմ և թոյլ չեմ տար որ խօսքին ծայրը մինչև իրարու դէմ անխտանալութեան յանգի :

Ըստ որում փամը 10 ին քառօրէ մնացած է, մենք չենք կրնար երկար սպասել. Պատրիարքին հրաժարման խնդիրը լուծելու համար պատգամաւորութիւն զրկեցինք, բայց ուշացաւ :

Ատենապետ Փաչան չկրցաւ շարունակել. վասն զի Սրբազան Պատրիարք Հայրն ուղեկցութեամբ երեսօխոսանական պատգամաւորաց երկու խորհրդարանին մէջ, և ատանց իւր նախագահական ակնուր բաղկելու, երեսօխոսանաց երկու կարգին մէջ տեղը կանգնելով, անմիջապէս խօսք առաւ հետեւեալ կերպով :

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՃ. — Մեր անցեալ շարթու ըրած այն խօսքին վրայ՝ թէ երբ Քաղ. Ժողովոց հրաժարականն ընդունուի, իմ հրաժարականս ալ պիտի ընդունիք, այսօր հրաժարականս տուի. սակայն Ժողովը պատգամաւորներ զրկեք էր իւր կողմէ, որոնք զիս քաշելով քուքը ըրելին հոս : Թերես այս տասներորդ անգամն է հրաժարական տալուս, բայց դուք նորէն չէք ուզէր հրաժարականս ընդունիլ. դուք քանի մը պատրիարքներ բռնի վար առած էք. ես կուզէի որ տոնոյմէ մէկն ալ իւր պատուով ելնէ պատրիարքութենէն դուք. այդ պատիւը չէք կամիր ընել ինձ : Ըստ որում դուք ուզէր էք խմանալ թէ ինչո՞ւ կը հրաժարիմ, պէտք է որ

քանի մը խօսքով բացատրեմ ձեզ՝ հրաժարելու պատճառը :

Մէկ կողմանէ կը տեսնեմ որ դուք իմ վերայ համակրութիւն ունիք, բայց միւս կողմանէ՝ զի մտիկ չէք ընէք. հազար անգամ կ'ուսմ'ընէք ըսեր եմ, դարձեալ կը կատիր կը գծարկէք և կը սրտակիր իրարու դէմ վայուն բաներու համար :

(ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Ա. մենեին)

Ա. մենեին ըսողն ալ կ'ուսմ' ընողներէն և արծարծողներէն մէկն է : Դուք կըսէք թէ կենսական շահուց համար կը վիճարանիր. բայց՛կեւ կը տեսնեմ որ կենսական շահուց համար բրածնիդ բաւարարին բարբիդանարիսն է : Ե՛նք կը կատուցուի և կատուցման միջոցին՝ անոր մէկ երկու սենեակ կը վարչութեան յատկանալու խօսք կըլլայ. դուք ոչ միայն այս խտտութիւն կատարուելուն արգելք կըլլաք, այլ և Պատրիարքը կը վճռուէք և մինչև անգամ մոխտուուն կանարգէք : Եթէ չէք ուզեր որ ես պատրիարքութենէ ելնեմ, իմ խօսքս պէտք է մտիկ ընէք : Մէկ կողմն ստանիր

Միւս կողմն ալ հին ազնուատեւութեան պէս կարծես թէ զէմերին կեցողներն Այկիանիայն եկած մարդեր են որոց հետ չեն հաճիր նստիլ և կուզեն իրենց կարծիքն չեղողներն արտարսել, մինչդեռ ամեն բան ազատ և մինչև իսկ ընդհանուր ժողովոյ մէջ ազատ կը հրատարակեն, առանց կռուելու թէ ազգին գործերն եղբայրութեամբ կրնան յառաջ երթալ : Ինձի պէս ցաւագար մարդու մը այսչափ տաղանայն ինչ է, թողէք ուրեմն իմ օձիրս. ես ձեր գերին՝ ձեր արծաթագինը չեմ. թողէք զի՛ս որ երթամ :

Ըստ որում զրկած պատգամաւորներնիդ շատ ստիպեցին, ուստի եկայ խօսիլ և պայման դնել որ եթէ կ'ուսմ' չստիպի ընէք և իմ խօսքս պիտի մտիկ ընէք՝ հրաժարականս պիտի ետ առնուիմ. իսկ թէ որ ստոր հակառակը պիտի ընէք՝ թողէք զի՛ս որ երթամ : Տուէք ուրեմն ձեր պատասխանը :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Արքայան Հայր,

մեր խօսքերը ծանր են, բայց դուք մեր զլուխն էք և մեր զլիտուն թագը և ձեզ մեծ յարգանք ու պատկառանք ունինք, ուստի կը տակնք և կը հանդուրժենք : Սակայն դուք Սահմանադրական Պատրիարք էք, և Սահմանադրութիւնը գործադրելու համար առաջի Աստուծոյ ուխտեալ և երդուեալ էք. ուստի մեր դձեղ սահմանադրական Պատրիարք կը ճանչնանք և չէթէ ըստ քմաց հրաման ընող և իշխող պատրիարք, և ձեր ամեն հրամանները կատարելու պատրաստ ենք, բաւական է որ աններ Սահմանադրութեան հակառակ չըլլան : Ձեր Արքայազնութիւնը քաջ զիտէ թէ Սահմանադրական Պատրիարք մը չունի իրաւունք՝ իմ խօսքիս մտիկ ըրէք ըսելու երեսփոխանական Ժողովին. չունի իրաւունք Ազգային ժողովը հրատարակու մեղադրելու թէ միցան բաներով ժամախառ կրող : Սահմանադրութիւնը կը տրամադրէ թէ Պատրիարքը պարտաւոր է Ժողովոյ որոշումները գործադրել. եթէ դուք գոհ չէք այս տրամադրութենէն, ըսէք մեզ, մեր կը ցրուինք : Ստացէք, որ երբեմն պատշաճից օրինաց հակառակ բաներ մեր վիճարանութեանց մէջ կը պատահին, ինչպէս որ ամենէն քաղաքակրթեալ ազգաց խորհրդարաններուն մէջ ալ կը պատահին. սակայն դարձեալ Ձեզ ամեն յարգանք և պատկառանք կը մատուցանենք և կը պաշտենք իսկ զձեզ՝ իբրև Սահմանադրական Պատրիարք, և ձեր սահմանադրական հրամաններուն կը հնազանդինք բայց անանց միայն, զի այս է Սահմանադրութեան ողին :

ՄԲԱՋԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — Եշն իսկ Սահմանադրութիւնը դուք կամակորեցիք. և Ազգային անտուկին գալիք եկամտի աղբիւրները դուք դոյեցիք :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ուրեմն սահմանադրապէս ամբաստանեցէք զմեզ :

ՄԱԳՍՈՒՏԵԱՆ ՍԵՊՈՒՀ ԷՖ. — Արքայան Հայրն ինչ որ կըսէ՝ իւր ազգապիտութեան ներշնչութեամբն է, պէտք է որ այս խօսքերն ժողովն ինքինքն արհամարհեալ համարի, և Սահմանադրութեան հակառակ երեցած խօսքերն ալ

իր յուզեող վիճակին արդիւնքն ըլլալով, պէտք է հակառակիլ. մենք աղաչելու և աշխատելու ենք՝ որ Եւրին Արքայազնութիւնն իւր հրաժարականն ետ առնու և չպնդէ այլ ևս անոր վրայ, և մենք մեր մէջէն վերցնելու խօսք պէտք է տանք պատակաւիչ կուսակցութիւններն :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Կուսակցութիւնք կարծես պարբերութիւններն կ'ներկայացունեն. առանց կուսակցութեան որ և է տեղ մը սահմանադրական Ժողով չկայ. աններ են՝ որ իրենց մրցմամբն և բաղիմամբն ճանապարհեան երևան դառն կ'օղնեն և աղապիս շահուց վրայ հակառակութիւնը կ'երաշխաւարեն. ի՞նչպէս կրնայ խօսք սող կուսակցութիւնները Ժողովին մեջէն վանել, որ անկորելի է :

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Ձէ թէ չենք կրնար վանել, այլ չպիտի վանենք կուսակցութիւնները :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Վերջապէս ինձ անհակընալի է այն խօսքը որ Արքայանը կընէ թէ կամ պէտք է զիեքը մտիկ ընենք և կամ բողոք որ ձգէ երբայ :

ՄԻՍԱԲԵԱՆ Ն. ԷՖ. — Արքայանն երկու երեք անգամ կըրկնեց թէ իմ ըսածս մտիկ ըրէք. բայց չըսաւ թէ ազգին գործերն իմ կամացս կամ հաճոյիցս համեմատ անօրինեցէք, այլ ըսել ուղեց թէ մի կուսիր և մի ատելութեամբ վարուիք իրարու հետ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Շատ տղէկ. Արքայանը մեզ բարոյական խրատ կուտայ ուրեմն. բայց մի թէ մեր հաճութեամբ կը տանինք այդ վէճերուն. արիւնք տաք կրակատ երեսփոխաններուն խօսքը կ'ուսմ' է միշտ : Բայց միթէ Արքայանն իբր Հայր հասարակաց չէ՞ կարող դոյնալիս մի առ մի կանչել և խրատով կամ սատիւ, օրհնութեամբ կամ անիծելք յուզողութիւն բերել ամենն ալ. ի՞նչ հարկ. ժողովս ամբողջ հրատարակու կըտամբել և մինչև իսկ ստանձանալ պարսկաւ կըտամբել և մինչև իսկ ստանձանալ պարսկաւ կամաւորեցի ըսել որ ծանր ամբաստանութիւն է. Երեցէք որ կրկնեմ թէ մեր

սահմանադրութենէ դուրս Պատրիարք չ'ենք կրնար ճանչնալ և միայն սահմանադրական սրտաբիրարքի խօսքը կրնանք ընդունիլ :

ՄԲԱՋԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — Յանցաւոր Պատրիարքը կը ձգեն :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ա. մենեին՝ յանցաւոր Պատրիարք չունիք. երբէք անվատահալութեան ցոյց մը չըրինք. վայրկեան մ'առաջ ամենիս ձեռախօսք քուէով մեր վատահալութիւնն ու սէրը յայտնեցինք Ձեր Արքայազնութեան վրայ. սրտախառնքիս ու յարգանքիս ինչ որ էին մինչև ցոյսօր՝ նոյնն են : Իմ ըսածս ա՛ն է միայն. Պատրիարքիս կը սիրենք, բայց անդր քան ըզ Պատրիարք՝ սահմանադրութիւն ունինք. Պատրիարք, Ժողով, Խորհուրդ, ամենայն ինչ անով են, նա պէտք է տիրէ ամենուն վրայ : Կաղաչեմ, խօսքերուս խտտութիւնը սիդրանցս բռնութեանը տուէք և ոչ թէ յուզման սրտիս : Ըստ որում ճանապարհորդ եմ մէկ քանի օրէն, և ըստ որում ժամը 10 է և հետուն բնակելով պէտք է աճապարեմ շողենալին հասնելու, ներկեցէք ինձ որ Արքայանին աջն առնելով մեկնիմ. Եւրեան է՛ի՛նտի իբրև դեր.— Ա. տեսաւ պէտք թող շնորհ ընէ իմ տեղս նստիլ և Ժողովն իւր գործը շարունակէ, եթէ կամի :

Այս սրտուս Ա. տեսաւ պէտք միայն Արքայանին աջն համբուրելով մեկնեցաւ Ժողովն. և երկրորդ ատենապետ Եւրեան է՛ի՛նտի զլուխն զլուխն անցաւ :

ՋԱՅՆԵՐ. — Կաղաչենք՝ Արքայան Հայր, ձեր նախադահական ակտիւն վրայ հրամայէք :

ՄԲԱՋԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — Ինչ որ ըսի՛ նոյնը կը կրկնեմ. իմ Պատրիարքութիւնն ընելու ժամանակս անցած է. այս դարձաւ անհրաժեշտ վրայ ստեղ կիրք կընեմ և կը բարկանամ. ցաւագարութիւնս է այս ընել տուողը. քանիցս անգամ է որ ես կը հրաժարիմ, իսկ դուք չէք ընդունիր. դարձեալ կըսեմ որ ես չեմ կրնար շարունակել, և կը խնդրեմ որ իմ տեղս ուրիշ

մը դնէք, արդէն պատրիարքութեան ժառանգորդներ կան, քիչ մ'ալ անոնք թող ընեն: Ես սահմանադրութիւն չեմ ճանչնար եղեր կամ Մահմանադրութիւն ըսելով ուրիշ բան կը հասկընամ. ես գիտեմ թէ կոխն ուրիշ է և կանոնաւոր վիճարանութիւնն ուրիշ, ուսկէ ըստ կը ծագի. թերևս ասոնք իմ խելքս չառնելու բաներ են, բայց ես կը տեսնեմ որ անհաշտելի տակաւորութիւն մը կայ, միտն պատճառներով իրարու հետ կը գծախօս, կաշխատիմ ու կաշխատիմ որ երկու ծայրը մէկ բերեմ. այս բաներուն ծայրը վտանգ կայ կըսեմ, դարձեալ ետ չէք կենար, ուրեմն ձգեցէք զիս՝ որ ազատ ըլլամ, եթէ մինչև ցայսօր տուժեցիք իմ երեսէս, ներում կը խնդրեմ: Միթէ ազգային պատմութեան մէջ կա՞յ այսպէս բան որ մէկուն բռնի պատրիարքութիւն ընել տուած ըլլան. եթէ կայ՝ դուցեցէք:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Յանուն Ժողովին կազմելով Սրբազան Հայր, որ նախագահական աթոռնիդ անցնիք:

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — Յանուն Ժողովին ստիպեցին զիս գալ, և եկայ, բայց հրաժարեալ եմ:

ՄԵՐԵԷՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Պարագաներն այնքան ծանր են՝ որ թէ ևս անձնական տկարութիւն ունենալով անկարող էի խօսք առնուլ, սակայն չիրի անասրբեր կենալ և խօսք ուղեցի: Եթէ պաշարիւնութեամբ մը իրերը նկատենք, բնական է որ երբ Պատրիարք մը անակընկալ կերպիւ հրաժեշտ տալով կը ձգէ կերթայ և մեք թախանձելով ու սրազատելով ետ կը դարձնենք զինքն, ասանկ յուզեալ պարագայի մը մէջ շատ տեսակ խօսքեր կըլլան, և ես շիտակը ըսելու համար՝ այդ խօսքերն իրենց բառերուն նշանակութեամբը մեկնել չէի սպասեր Ատենապետ փառայի խոհեմութենէն: Սրբազանն այնպիսի զեզեցիկ փորձեր տուած է ազգ և ժողովուրդը կառավարելու մասին, որ ես դժուարին կը կարծեմ այնպիսի մէկը դռնել այսպիսի ժամանակի մը համար. Սրբազանն ըսաւ թէ կամ խօսքս

մտիկ ըրէք և կամ զիս թողէք. մեք Ներսէս Սրբազանի պէս անձի մը բերնէն երած սցասիսի խօսք մը ուրիշ կերպիւ պէտք չէ հասկնանք, այլ սո՛ւ թէ՛ Ընդհանուր Ժողովոյ մէջ իրարու նախատեսելու և ստիպարակելու ջանքեր և միտումներ կը տեսնուին՝ որոնք ազգային գործոց յետադիմութեանը պատճառ կըլլան: Սրբազան Հօր այս ըսածն իւր կարծիքն էր, և այսման դնել ուղեց որ այնպիսի միտասկար ջանքերէ ետ կենանք, երբ այս մտօք առնուք իւր խօսքերը՝ կրնանք ընդունիլ իւր սրայմանը. իսկ Փառան ուրիշ կերպ մեկնեց. բայց դայն ալ չեմ մեղադրեր, որովհետեւ տեսնելով որ Սրբազանն իւր նախագահական աթոռին վրայ չը նստիր և տեսակ մը բացատրութիւններ կուտայ, կերպիւ մը դադարեալ ուղեց թէ իւր ըսածներն եթէ Սահմանադրութենէ չեղիլ կը նշանակեն, ոչ Ընդհանուր ժողովն և ոչ ազգը չեն ընդունիր: Հիմա այսպիսի փախուկ պարագայից մէջ երբ Քաղ. Ժողովոյ հրաժարականն Ազգ. Ժողովին ընդունուած է, չեմ կարծեր որ Նորին Սրբազանութիւնն իւր հրաժարելով՝ որ բոլորովին տարբեր է Քաղաքական ժողովոյ հրաժարականէն և միևնոյն նշանակութիւնը չունի, տեղի տալ ուղեց այնպիսի հետեանայ . . .

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — [Բերնիչելով] Յամառեալներէն մէկն ալ հրամանդք ես, բանի բանի անգամ ստիպեցի գրեղ՝ որ Փախուղեան էֆէնտիի հետ Ղարաթիոյ Թաղ. Խորհրդոյ պաշտօնը վարեալ, բայց չընդունեցիր: Չեմ հասկընար՝ ի՞նչ բարբիգանութիւն է ձեր այս ըրածը:

ՌՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Սնձնական սրապատմութեանց վրայ կերթան խօսքերը, Ատենապետ էֆէնտի:

[Աղուկք]

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կազմելով, ատենաբան էֆէնտի, եզրակարգութիւննիդ ըրէք:

ՄԵՐԵԷՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Մեր ամենա ալ կը փախարկիք և կազմեցէք Սրբազան Հօր՝

որ Քաղ. Ժողովոյ հրաժարականն ընդունուելուն վրայ չիշտանայ, որովհետեւ անոր տեղ զովք մարմինը Ատենապետաց համագումար ղրւանի կողմէ տրուելիք ցուցակին վրայ պիտի ընտրուի, և այս ցուցակը Սրբազանին և նոյն համագումար ղրւանին խորհրդակցութեամբը պիտի պատրաստուի. հետեարար Սրբազանը կըրնայ Քաղ. Ժողովոյ մէջ գտնուելու հարկ համար բաժ անձինքը ցոյց տալ համագումար ղրւանին: Այս բացատրութիւնները տալիս ետեւ, կազմեմ Նորին Սրբազանութեան, որ ամենուս ալ յանցանաց ներելով իւր նախագահական աթոռը բազմի. և եթէ մեր մեր պաշտամանց մէջ թերութիւններ ունինք՝ զորս Նորին Սրբազանութիւնը միտասկար կը դատէ՝ ազգային գործոց յառաջդիմութեան համար, ես թէ իմ մասին և թէ իմ բարեկամացս համար կը խտտանամ դաշտանալ այդպիսի թերութեանց մէջ դըտնուել. միայն թէ մեզնէ սրահանջուածն անկարելի բաներ չըլլան: Եւ կը յուսամ որ մեզ պէս արիւններն ալ կը խտտանան:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Ես կը յայտարարեմ որ երեւոյթանութենէս դուրս սրաշտօն բնաւ չպիտի վարեմ:

ԷՍԱԵԱՆ Մ. ԷՖ. — Ես երկարորէն փառտարանել չեմ գիտեր, այլ սրարդապէս բանի մը բառով իմ կարծիքս և դադարեմս պիտի բացատրեմ:

Կուսակցութիւնը մեր մէջէն չը վերնար. կուսակցութիւն ունինք, բայց ատենութիւն պէտք չէ որ ունենանք: Խօսք տուինք այնպիսի Վարչութիւն մը բերել հրաժարելոյն տեղ որ Սրբազանը գոհ ըլլայ. ուրեմն խտտանալով նաև որ խռովութիւնն ու ատենութիւնն մեր մէջէն պիտի վերնան, ազաչենք Սրբազան Հօր՝ որ հրաժարականն ետ առնու և իւր նախագահական աթոռը բազմի:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Ատենութիւն չունինք, քուէ ունինք:

ԷՍԱԵԱՆ Մ. ԷՖ. — Բանի որ Փախաղ.

եան էֆէնտի՝ ատենութիւն չունինք կըսէ, ատենա ալ միևնոյն դրացմամբ պէտք է ազաչենք Նորին Սրբազանութեան, որ իւր պատրիարքական պաշտօնը շարունակէ: Մեր չենք կրնար դադարացուց ազգին պէս կուսակցութիւններ ունենալ. մեզի համար սէր պէտք է, և սիրով կրնանք գործել:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կազմելով, Սրբազան Հայր, Ժողովին խնդրը մի մերժէք, նախագահական աթոռնիդ բազմեցէք:

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — Ժողովին խնդրը կընդունիմ, բայց սրայմանա՝ որ կոխ չպիտի ընէք. երբ նորէն կուտիք, կը ձգեմ կերթում: Ես ձեզի ըսեմ. Պատրիարքին աշխատութիւնը, հոգևով մարմնով ծառայութիւնը օգուտ մը չընէք՝ երբ դուք երկպառակիք. սէտք է համոզուիք որ կոխն ու ատենութիւնը ազգին միտս կը բերեն:

Չայս ըսելով Սրբազան Պատրիարքն իւր նախագահական աթոռը բազմեցաւ, և Ատենապետ էֆէնտին յայտարարեց Ժողովին՝ թէ Պատրիարքական հրաժարման միջադէպը դոյուած է:

[Յայնակարգութեան ձայներ]

ԱԼԻԲՍԱՆԵԱՆ Մ. ԷՖ. — Ներեցէք ինձ՝ որ յանուն գաւառական ազգայնոց երկու խօսք ուղղեմ Նորին Սրբազանութեան: Մեր Պօսեցի ազգայինք անգորր նստած՝ չգիտեն թէ ի՞նչ կը կրէ մեր գաւառացի ժողովուրդը. Սրբազան Հայր, ձեր շնորհիւն է որ 10էն 8ի իջած է այսօր գաւառացոց ներգութիւնը. շնորհակալութիւնս կը յայտնեմ այս մասին, և յատահ եմ որ Չեր Սրբազանութիւնն իւր պատրիարքական բարձր սրաշտօնութիւնն ի նպատակ գաւառաբնակ ժողովրդեան պիտի շարունակէ գոնէ մինչև ներկայ տաղնասպաղից վիճակն անցնի. անկէ յետոյ կամը ձեր Սրբազանութեանն է:

ԱՂԱԲԷԿԵԱՆ Ս. ԷՖ. — Ժողով իւր կողմէ պատգամաւորութիւն մը դրից, որուն ես ալ մասնակցելու սրատիւ ունեցայ. մեր մեր

սրաշատնը կատարեցինք ու Սրբազան Հայրն ալ ի միասին առնելով դարձանք ի Ժողովն, բայց մեզի չհարցուեցաւ թէ ի՞նչ արդիւնք տնկցանք: Պէտք է յայտարարեմ թէ Սրբազան Հայրն այն դաշտը կրցանք համոզել որ մեզի ցուցուցած սրտածառները գոյ Ժողովին ներկայութեան ալ յայտնէ և ուղածին պէս խրատական խօսի երեսս փոխանայ:

Սրբազանին խօսքերուն ընծայուած հակասահմանադրական մեկնութիւններն անտեղի էին, եթէ Ստեփան փաշա իրր կրեւտիտան կուղէր սրտատաննել Սրբազան Հօր խօսքերուն, պէտք էր անմիջապէս դիւանէն վար իջնուլ, եթէ ոչ՝ իրր ատենաարեւ իրաւունք չունէր այն կերպով բացատրել և մեկնել Սրբազանին խօսքերն, այլ պէտք էր նախ՝ պատգամօրութեան ընկերը ընել և յետոյ Ժողովին կարծիքն առնելով խօսիլ և վիճարանութիւն բանալ: Որչափ ցաւ ըզգաց ատենաարեւ փաշան Սրբազանին երթալուն համար, նոյնչափ կը ցաւիմ և ես սահմանադրատաշտ ատենաարեւ փաշային այնպէս խօսելուն և առնել քաղերուն համար, միեւնոյն բանը ինք իր վրայ ցուցուց:

Ժողովն ուշադրութիւն ըրած չէր անցեալ շտաբու Սրբազան Հօր ըրած այն յայտարարութեան՝ թէ ինք ալ պիտի հրատարի թէ որ Քաղ. Ժողովը հրատարակէ ընդունալի Ազգային Ժողովին: Երբ այսօր քուէտուին եկաւ և արդիւնքն եղաւ Քաղ. Ժողովը հրատարական ընդունելութիւնը, Սրբազանը վշտացաւ և ձգեց զը-

նաց. քանի որ քուէն ծնուաւ այդ ընդունելութիւնը, տարակրցա չկայ թէ Սրբազանին ուրիշ բան չէր մնար ընել, բայց եթէ այդ քուէն յարգէր, Ստեփան իր վրայ հիւանդութիւն մը կայ, որ ստանի բաներ ընել կուտայ: Վերջապէս մեք համոզեցինք և վերադարձուցինք Նորին Սրբազանութիւնն այն արցմանաւ որ եթէ գոյ, երկու կուսակցութեան ալ խրատներ խօսի, ուսկից թերեւս պիտի վշտանայր ըստ: Ազգային Ժողովն եթէ ուղէր, կրնար վիճարանութիւն բանալ, բայց ատենաարեւ փաշան ատենայ Ժողովին հարցներու ըստ քմոց մեկնութիւններ տուաւ ու երաւ գնաց:

ՁԱՅՆԵՐ. — Կը բողոքենք այդ խօսքերուն դէմ. Ատենաարեւ փաշա ծանոցայ իւր մեկնելու փամանակն հասած ըլլալը, և այնպէս մեկնեցաւ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այո՛, այնպէս եղաւ. և վայելուչ չէ, կարծեմ՝ նորա բացակայութեան փամանակ այդպէս խօսիլ:

Ատենաարեւ էֆէնտին յայտարարելով որ յառաջիկայ ուրբաթ օր ատենաարեւոց դիւանը պիտի գումարի Քաղ. Ժողովը ընտրելուց ցանկը պատրաստելու համար, և 15 օր ետքը Ժողովը յաջորդ նիստը պիտի գումարի, ատենաարեւ գոցեց ժամ 10ին:

Ստեփանայտի	Ստեփանայտի
Հ. Ս. Սրաճաճեան	Ս. Սրաճաճեան

Վսեմազար Ատենաարեւ Փաշա Ազգային Ժողովը

Քաղաքական փոքրիկ ներկայիս կը մտաւ ցանկ Ազգային Ժողովը Կեդրոնական մտաւ կին անցեալ տարուց մէջ տնկցած երմտական գործադրութեան հաշուեցոյցին հետ նաև յառաջիկայ տարուց համար ենթադրեալ հաշուեկը չիւր, զորս Տնտեսական Խորհուրդն ըստ Սահմանադրութեան պատրաստելէ ետև իւր բացատրութեան յայտարարուլը կանխած էր Քաղ. Ժողովը մատուցանել, և Ժողովը զայն ի նկատի առնելէ և հարկ եղած բարեփոխութիւններն ընել տալէ ետև՝ այսօր կը փութայ թէ հաշուեցոյցը և թէ հաշուեկը Տնտեսական Խորհուրդը բացատրութեան գրոյն հետ ի միասին ներկայացընել Ազգային Ժողովը ի սրտուարաշած անօրէնութիւն:

2 Յունիս 1877	Մնակը Յարդանօր
Ի պատրիարքարանի Հայոց	
Կ. Պօլիս	Ի դիմաց Քաղ. Ժողովը
ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ	ԳԵՐ ԱՏԵՆԱՊԵՏ
Յ. Պոյաճեան	Ս. Մարտառեան

Ատենաարեւ Սրբազան Պատրիարք Հայր Նախագահ Ազգ. Քաղաքական Ժողովը

Սահմանադրական նոր տարուց սաթիւ Տնտես. Խորհուրդը կը փութայ սահմանակ Կեդր. Մտուկին անցեալ 1876-77 տարուց երևմտից բնդհանուր հաշուեցոյցակը և ընդ նմին ներկայ 77-78 տարուց հաշուեկը Պատրիարքի Ժողովը մատուցանել, զորս Երևմտից Հագարաճութեան հետ պատրաստած է յետ մանրամարն քննութեանց:

Կեդրոնական Մտուկին երմտական վիճակին իրրե ՚ի հայելու՝ յստակ կերպով նկարուած է հաշուեցոյցին մէջ, որ ցոյց կուտայ այն վիճակը, ո՛ր կը գտնուէր Կեդրոնական Մտուկին անցեալ սահմանադրական տարուց սկիզբը, որ կը նշանակէ ոչ միայն նոխորդ 76-77 տարուց մէջ գանձուած հաստիւց և մատակարարուած ծախուց որբանութիւնն ու տեսակները, այլ և հինն

Մտացած սրտարերն ու սրահանջները, գանձուած առնելիքներն և հին սրտուց հաշուցն եղած վճարումներն և ինչ որ տակուին հինն կը մնայ սրահանջք ու սրտարք՝ սրտն ուրոյն, և ամէն հաշուական մանրամասնութիւններով:

Այս մանրամասնութիւնները թէև կատարեալ գաղափար մը կուտան Մտուկին գրամա կան բախանդակ գործառնութեանց վրայ և բացատրութեան պէտք չեն թողար, սակայն Տնտեսական Խորհուրդը կը կարծէ թէ անօգուտ չ'ընիր համարու տեսութեամբ մը հաշուեցոյցին մէկ քաղաածոյն մատուցանել և ինչ ինչ ծանօթութիւններ և տեղեկութիւններ տալով՝ Մտուկին երևմտից միամեայ մատակարարութեան ընթացքը բացատրել:

Անցեալ սահմանադրական տարուց սկիզբը Կեդրոնական հաշուետուարք 291,003 դրուչ սրտուք և ընդ նմին 910,645 դրուչ սրահանջ կը նշանակէին յանուն Ազգ. Մտուկին, սրտուց գումարէն 157,377 դրուչը Մտուկին ՚ի վազընջուց մտացած քանի մը կտոր սրտարերէն կը բաղկանար, որոնք Ազգ. հին սրտուց բարձման առնելէն կրցած սրտուլը, սրտատապահանջներն անցոյցա էին և անձանօթ. և այս սրտուց գումարը սրտան որ հաշուետուարուց մէջ կերեկը, բայց ամենամեծ մասամբ անուանական և ջնջելի էր. այլ մտացորդ 133,626 դրչի գումարը նախընթաց 74-75 և 75-76 տարիներու մատակարարութեան երկամեայ շրջանէն մտացորդ սրտուք մ'էր, իրական և վճարելի: Իսկ սրահանջմանց գումարէն 815,683 դրուչը նոյնպէս Մտուկին ՚ի վազընջուց տնկցած գանձուած առնելիքներէն կազմուած էր, որ ինչպէս նախորդ Տնտես. Խորհուրդները բազմիցս դիտել տուած են, մեծ մասամբ փառն էին և անցոյցատակայն մտացորդ 93,922 դրուչը 75-76 տարիէն թողուած սրահանջ մ'էր, որ կը կազմուէր գրեթէ խաւարապէս մուգութայի և քանչելիքի անվճար տարրերէն:

Այսպէս սահմանակ ՚ի բաց առեալ հին սրտուց և սրահանջմանց հաշիւները, Կեդրոնական Մտուկին անցեալ սահմանադրական տարուց սկիզբը՝ նախորդ մատակարարութիւնէն մտաց

ցած 133,626 դրուչ պարտք ունէր վճարելի, և տար դէմ 93,922 դրչ առնելի: Երբ մէկ կողմէ այս 133,626 դրչի պարտուց գումարն, որու վճարումն անխուսափելի էր և անհնար անտես տունել, կը ծանրանար 76-77 տարուց շրջանին վրայ, միւս կողմէ հաշուեկշիռ մը կար նախորդ Վարչութեան օրով պատրաստուած, որ Տնտես. Խորհրդոց սեղանին վրայ կը կենար և Կեդրոնական տրոց հաւարումն 100000 դրչի գումար մը ենթադրելով հանդերձ 116,680 դրչի նոր պարտք կ'գուշակէր նոյն տարուց համար, պարտք մը սա. կայն, զոր 146,080 դրուչ պէտք էր հաշուել, զի նոյն հաշուեկշիռն պատրաստութեանն էակ. քանի մը ծախուց գումարներ նախորդ Վարչութեան օրով յաւելցեր էին, զոր հաշուեկշիռը չէր նախատեսուած, թող որ չէր գուշակուած նաև այն դրամական ծանր ճգնաժամը, յորմէ Կեդրոնական սնուակն ալ անցնելով նոյն տարին՝ քանի մը զլսաւոր հասոյթներ, որոնք նախընթաց տարուց արդեանց համեմատութեամբ ենթադրուած և այնպէս հաշուեկշիռն մէջ անցած էին, 117,416 դրչի գումար մը պակաս պիտի բերէին. ինչպէս իրողութիւնը յայտնեց ՚ի վերջէ, և բնապէս՝ այդ պակասած գումարին տեղ՝ անտնտեսելի պարտք մ'ուս պիտի գոյանար. և 1874-75 տարիէն սկսելով՝ մինչև 76-77 տարուց վերջ՝ 397,000 դրչի չափ պարտք պիտի ունէր նոր Մտուկը հին պարտուց գումարէն դատ, և անոր անցեալը վերագաւնար:

՚ի սկզբան իրենց պաշտօնավարութեան՝ ոչ Տնտես. Խորհուրդն և ոչ Ելեմտից Հոգարար. ձուլութիւնը կրնային ենթադրել որ Կեդրոնական Մտուկին հասոյթը նախորդ տարուց վրայ այդքան պիտի պակսէր, սակայն ինչ որ իրական էր և հաշուց ներքև գուշակուած, երկրացութիւն չէր վերցնէր և ակն յայտնի կը զիտէին որ 297 հազար դրչի պարտք մը կապտանար Արն. տուկին: Այս պարագային մէջ Տնտես. Խորհուրդն և Ելեմտից Հոգարար. ձուլութիւնը փութացին իրենց ջանքերն ընդ իրեարս լծարդել, և միտարան աջակցութեամբ՝ Կեդրոնական Մտուկին մատակարարութեան հոգը զիւրել, օրինաւոր տնտեսութեան սկզբունքն սուսջնորդ բըն.

նեղով իրենց: Օրինաւոր տնտեսութիւնն երկու միջոց կենթադրէր, նախ հասոյթներն արդիւնաւորել, և երկրորդ հաշուեկշիռ մ'առնելու, և անոր գծած սահմանին մէջ՝ ծախսերն յանձան. ձել առանց կարելի խնայողութիւններն անտես առնելու. և առանց բացարձակ կարեւորն յանուն խնայողութեան լքանելու, յորմէ քաղուելիք նիւթական շահն բարոյական միասով փոխարինուած էր: Այս տրամադրութեամբ՝ Տնտես. Խորհուրդն և Ելեմտից Հոգարար. ձուլութիւնը բըն. նեղով 1876-77 տարուց համար պատրաստուած հաշուեկշիռն՝ սկսան կից ու մտից մէնմի սպիւր խուզարկել, և զլսաւորաբար ազգ. տրոց կանոնադրին անգործադրութեան պատճառները հետաքննելով՝ տրոց սատիճաններուն և բաշխման ու հաւարման եղանակին նկատմամբ՝ քանի մը բարեփոխում հարկաւոր գտայցին. որոնք Պատկառելի ժողովոյդ կողմէ ինչ ինչ փոխուութեամբ Ազգ. Ժողովոյ բարձրագոյն որոշման ներկայանալով՝ անոր հաւանութեան դրօշը բուտայան. հետևապէս Տնտես. Խորհուրդն և Ելեմտից Հոգարար. ձուլութիւնը գործադրութեան մասին պէտք եղած հրահանգը պատրաստելով՝ Ժողովոյդ հաճութիւնն ստանալէ ետև՝ Մայրաքաղաքիս մէնմի թաղին մէջ, տրոց բաշխման ցուցակները պատրաստելու պաշտօնով՝ Յանձնաժողովներ կազմեցին և այսպէս թէ հասոյթներն արդիւնաւորելու միջոցներ պատրաստելով և թէ ծախուց մասին կարելի խնայողութիւններն ու փոխախտութիւնները սահմանելով հաշուեկշիռն մէջ՝ զայն մատուցին Պատկառելի Ժողովոյդ:

Այս ջանքերուն նպատակն էր երևտական կատարելալ բարւոքում մը ձեռք բերել, և այնպիսի ուղղութիւն մը տալ Մտուկին ելեմտից ընթացքին, որ կարելի լինէր Պատրիարքարանի ծախսերն անխափան ու կանոնաւորապէս մատակարարել և արդելու խաղառ այն վիճակին վերադարձը, որ Ազգ. Մտուկին ինկած էր երբեմն մեծագումար պարտուց բեռան մը ներքև ընկնուած: Տարակոյս չկար թէ այս միջոցներն յաջողած էին, երբ նախորդ մատակարարութեանն մնացորդ պարտքը ջնջելու և 76-77 տարուց

համար ենթադրեալ բացը զիմաւորելու նպատակաւ՝ ամէն ջանք ՚ի գործ դրուած ատեն՝ միւս կողմէ ժամանակին դրամական նեղութիւնը նոր հարուած մ'ալ չտար, և Մտուկին հասոյթը մեծագումար տարբերութեամբ կարճելով՝ հաշուեկշիռն հիմունքը բոլորովին չխախտէր:

Այսու ամենայնիւ եթէ ՚ի գործ դրուած ջանքերն որոշեալ նպատակին չհասան սա մեծ արդիւնքն ունեցան զէթ՝ որ Կեդրոնական Արն. տուկը դրամական ճգնաժամուն պատճառաւ՝ այսքան մեծագումար հասոյթ կորնցնելով հանգերձ՝ կրցաւ ապակին անոր հետևանացը տակալ, և ինչ պարտուց գումար որ տարուան սկիզբը ենթադրեալ էր, առանց հասութից այս նուազումն ՚ի հաշիւ դրուելու տարուցն վերջը անկէ շատ պակաս պարտուց գումար մը մնաց, մեծ մասամբ առնելիքներով զիմաւորուած, որոնք չէին դանձուած:

Ինչպէս հաշուեցոյցին մէջ կերելի, անցեալ տարի Կեդրոնական Մտուկին 88,735 դրուչ ընդունած է նախընթաց տարիներու պահանջներէն և 363,992 դրուչ նոյն տարուց հասութից աղբիւրները կրցած են արտադրել, ընդ ամենը 452,728 դրչ զուտ հասոյթ, որու վրայ յաւելցած է նաև փոխառութեամբ արտադրեալ 38,824 դրուչի գումարը. և այսպէս Մտուկին բովանդակ մտից գումարն եղած է 491,552 դրչ:

Թէ՛ քանի տեսակ աղբիւրներէ կը բղխին Կեդրոնական Մտուկին հասոյթներն և թէ՛ 75-76 տարուց հետ բաղադատմով՝ անցեալ տարի հասութից որ ճիւղերն պակաս, կամ աւելի արդիւնք արտադրած են, արժան է աստ մի առ մի նշանակել և աւելի մեկին կերպով հաշիւը պարզել:

Ա. Կեդրոնական Մտուկը զանազան անձերէ ունեցած հին պահանջմանց գումարէն՝ դանձած է անցեալ 76-77 տարուց մէջ 8318 դրուչ:

Բ. Մինչդեռ 75-76 տարուց մէջ մուգութայի և քանչեկերի տրոց յետնեալ պահանջներէն 48,432 և նոյն տարուց հաշուցն համար 47,352 դրուչ, ընդ ամենը 95,784 դրուչ, դանձուած է, անցեալ տարի յետնեալ պահանջներէն

79,377, և նոյն տարուց հաշուցն 51,198 դրուչ, ընդամենը 130,575 դրուչ կրցած է դանձուել, ըսել է 75-76 տարուց վրայ 34,791 դրչ աւելի:

Այս մուգութայի տուրքը տարեկան 94,930 դրուչ քանակութեամբ ՚ի վաղ ժամանակաց գաւառական վիճակներուն վրայ բաշխուած, իսկ քանչեկերի տուրքը տարեկան 24,800 դրուչ քանակութեամբ մայրաքաղաքիս Կեդրեցեաց վրայ բաշխուած տուրք մ'է:

Գ. Անցադրատան հասոյթն՝ որ կը գոյանայ ուղեւորութեան անցադիր, արհեստաւորի արտօնադիր և մէճիտից ստանալու համար տըրուած իրմոխապէրներու վաւերացումն, մինչդեռ 75-76 տարուց մէջ 46,044 դրուչ արդիւնք արտադրեր է, անցեալ տարի մինչև 25,644 դրչի ինկու. ըսել է 20,400 դրուչ պակաս եղաւ արդիւնքը:

Դ. Վազիի հասոյթն՝ որ կը գոյանայ կառուածական առուծախի գործողութեանց համար Պատրիարքարանի անցադրատան կողմէ տրուած վիսյագրերէ, և կը գանձուի մասնաւոր օրէնքի մը համեմատ մինչդեռ 75-76 տարուց մէջ 100,140 դրուչ բերած էր, անցեալ տարի 77,590 դրուչ բնեց, ժամանակին ծախող բերմանց պատճառաւ՝ կարուածոց առուծախը դժուարացած լինելուն. ըսել է 22,550 դրուչ պակաս արդիւնք արտադրեց անցեալին համեմատական հաշուով:

Ե. Նշանտուութեան հասոյթէն մինչդեռ 75-76 տարուց մէջ 87,472 դրուչի գումար մը գոյացեր էր, անցեալ տարի 69,590 դրուչ արդիւնք բերու. ըսել է 17,882 դրուչ պակաս:

Զ. Պատկադրութեան հրամանի հասոյթն որ 75-76 տարուց մէջ՝ 22,225 դրուչ արտադրած էր, անցեալ տարի 20,454 դրուչ եղաւ. ըսել է 1771 դրուչ պակաս:

Է. Գլխանական հասոյթն, որ կը գոյանայ Կեդրոնական դիւանատուն կողմէ տրուած դանադան վիսյագրերէ, վաւերացման գործողութիւններէ, և երդման ծանուցադրերու յատկացեալ տուրքէն, մինչդեռ 75-76 տարուց մէջ 6,670 դրչ

բաներ էր, անցեալ տարի 5076 գրուշ բերաւ ըսել է 1,594 գրուշ պահաւ :

Ը. Պատահան հասցիքն՝ որ յատենի Պատաստանական Խորհրդոյ իմաստած անհատական գրասերէն կը գոյտնայ և կը գանձուի մասնաւոր օրէնքի մը համաձայն, մինչդեռ 75-76 տարւոյ մէջ 2276 գրուշ արդիւնք ունեցեր է, անցեալ տարի 1,415 գրուշ բանեց, ըսել է 861 գրուշ պահաւ :

Թ. Կանգալատուրքն, որ պաշտօնական ընտրութեանց հաստատութեան համար տրուած Պատրիարքական կանգալներէն կրանուի, 75-76 տարւոյ մէջ մինչդեռ 1354 գրուշ արդիւնք ունեցեր էր, անցեալ տարի 2728 գրուշ հասցիք բերաւ, ըսել է 1374 գրուշ աւելի :

Ժ. Ծննդոց և վախճանմանց հասցիքէն՝ որ ծննդոց և վախճանմանց պարագաներու մէջ կրանուի 5, 10 և 20 գրուշ որչեալ աստիճանաւ և կը հաւարուի Թաղ. Խորհրդոց ձեռք, մինչդեռ 75-76 տարւոյ մէջ գոյացեր է 335 գրուշ անցեալ տարի 55 գրուշ մասն է Սնտուկն, ըսել է 280 գրուշ պահաւ :

Ա. յս հաստից հաշիւներն զեւ ամբողջապէս չեն եկած Թաղական Խորհրդոց կողմէ, և ինչ գումար որ գանձուած է, անշուշտ նոյնը նշանակուած է իրրե հասցիք :

ԺԱ. Գրօշմութեւզի հասցիքն՝ որ կը գոյտնայ կառուածական առածախի վրայադրերը գրելու համար Թաղական Խորհրդոց մաստաւարուած գրօշմաւոր թղթերէն, մինչդեռ 75-76 տարւոյ մէջ 1100 գրուշ եղած էր, անցեալ տարի 700 գրուշ բանեց, ըսել է 400 գրուշ պահաւ :

ԺԲ. Աղգ. Ժողովոյ տակնադրութեանց հասցիքը՝ մինչդեռ 75-76 տարւոյ մէջ 2201 գրուշ արատադրած էր, անցեալ տարի 3135 գրուշ բերած է, ըսել է 934 գրուշ աւելի :

ԺԳ. Արտարոց կարգի հասցիքներ կան, որք մեծ մասամբ կը գոյտնան ըստ զխորոց, և անորոշ են տեսակաւ, այս հաստից կարգէն,

է 4. Զատիկական տօնին առթիւ՝ 75-76

տարւոյ մէջ մասնաւոր ազգայիններէ բացառիկ նուէր մը հաւարուեր է 'ի նորատ Սնտուկին, և 14,275 գրուշ գումար մը գոյացեր է, իսկ անցեալ տարի 7735 գրուշի գումար մ'ընդունած է Սնտուկը, զոր մեծ մասամբ 'Բաղ. Ժողովոց անգամբ իրենց կողմէ ընձեռած են իրրե նուէր՝ Կոյսերական Պահակապետութեանց առթիւ՝ Սնտուկին ունեցած արտարոց կարգի ծախքերը չախուարելու համար, ըսել է այս աղբիւրէն 6540 գրուշ պահաւ գոյացած է 76-77 տարւոյ մէջ :

Չ. Կայրաբաղարիս Աղգ. հաստատութեանց կառուածոց սեզականագրերը՝ Տերութեան Թաղիկի Կայրի առթիւ՝ յանուն իւրաքանչիւր Աղգ. հաստատութեան արձանագրել տարու համար անցեալ 75-76 տարւոյ մէջ՝ 139 07 գրուշի գումար մը ստացեր է Կեղր. Սնտուկը, սակայն այս տարի այս աւասի հասցիք մը չէ ունեցած :

Յ. Զանուէն Զրնտանի բանտարկերոց ամէն տարի Զատիկի առթիւ Եկեղեցեաց մէջ՝ թատախ կը շրջաբերի, և Պատրիարքարանի միջնաբանտարկերոց կը մատակարարուի : Ա. յս հասցիքէն 75-76 տարւոյ մէջ 2374 գրուշ մասն է Սնտուկն, իսկ անցեալ տարի 1268 գրուշ մասն է, այս ալ համեմատաբար 1106 գրուշ պահաւ : Ա. յս աւելին այս պահաւը պէտք չէ 'ի հաշիւ դնել. վասն զի Սնտուկին նիւթական վիճակին վրայ ուղղակի ներգործութիւն մը չունի, և ինչ քանակութեամբ գոյանայ, նոյն չափով կը մատակարարուի որչեալ նորատուկին համար :

Կ. Երկտան գործողութիւններէ 75-76 տարւոյ մէջ՝ Սնտուկը 152 գրուշ գրամոց շահ ունեցեր է, իսկ անցեալ տարի՝ այս շահն անհամեմատ առաւելութեամբ բազմապատկուելով՝ 4682 գրուշ գրամական շահ գոյացեր է. թրդութադրամը 100 գրուշ գնով առաւելուն պատճառաւ :

ԺԴ. Կը մնայ Կեղրանական ուղղակի տուրքը, որու հաւարումն անցեալ 76-77 տարւոյ մէջ ըստ նոր բաշխման տեղի պիտի ունենար և զոյն սկսել տարու համար Տնտես. Խորհրդը բաշխման ցուցակաց կողմէր տկնդէս : Ա. յս

տուրքը իւր ընդհանուր տեսակովը Սնտուկին և լուծակց հաւատարկչութեան նժարը պիտի բանէր և միւս հաստից պահաւը լրացնէր, բայց բաշխման ցուցակները պատրաստող Յանձնաժողովները՝ Թաղ. Խորհուրդներէն չգտան զըժբազաբար այն օժանդակութիւնն, որու կարօտ էին գործն 'ի յանգ հանելու համար և պաշտօնական քառակի ազգարարութիւններ արձագանք չգտան, հետեւապէս Յանձնաժողովները՝ քանի մը բացառութեամբ՝ չկրցան խնդրուած ցուցակներն յազարկել :

Ա. յս վիճակին մէջ էր արոց խնդիրն երբ երեսփոխանական ընտրութիւններն սկսան թաղերու մէջ : Ընտրական իրաւունքը սահմանադրուած էր երկու հիմանց վրայ խորթեալ է. նիւթական և բարոյական, և Սահմանադրութեան 65րդ յօդուածը քառակիութեան մասնակցերու իրաւունքն ունոյն կ'ընծայէ, որոնք անձնական արժանիք ունին և տարին գտնէ 75 գրուշ ընդհանուր տուրք կը վճարեն : 'ի հարկէ ընտրութեանց օրինաւորութիւնը քննելու ժամանակ՝ նաև այս նիւթական արջմանին պահանջութիւնը չէր կարելի անտես առնել՝ թէ օրինաց մէկ արամադրութիւնն և թէ Կեղրանական Սնտուկին նիւթական շտէք արհապանելու համար : Ա. յս խորհրդածութեամբ էր որ Տնտես. Խորհուրդն անցեալ ապրիլ ամսոյ 16ին՝ Պատկառելի Ժողովոյ առաջարկեց որ ընտրութիւններ կատարող թաղերէն պահանջուին արոց բաշխման ցուցակները, ոչ թէ անոր համար միայն որ ընտրողոց թուոյն օրինաւորութիւնն այդ ցուցակներուն վրայ կարելի էր ստուգել. այլ մանաւանդ այն զխումով որ սպալիսի միջոց մը անուղղակի խրթան մը կը դառնար պահանջուած ցուցակները իութացնելու համար : Ա. յս առաջարկութիւնն թէ և Պատկառելի Ժողովը ընդունեց, բայց գործողութիւնն ինչպէս յայտնի է, զանազան զըժբաւարութեանց հանդիպելով՝ տարադիւն մնաց :

Քանի մը թաղեր միայն, որք են Պէշիկիաւ Գասըժ փաշա, Պէշիկաբաէրէ, Քուրու չէշմէ, Եննի քալու, Լյուպ Սուրբ Աստուածածին, և 'Նոր դիւղ, թէ և անազան՝ բայց մինչև անցեալ սահմանադրական տարւոյ վերջ՝ հասուցին

որ ուրեմն պահանջուած ցուցակներն, որոնք 47 970 գրուշի արոց դուծար մը ցոյց կուտան, 1577 ազգայիններէ գանձելի :

Ուստի այս տարուամ վիճակին մէջ 76-77 տարւոյ համար Աղգ. արոց հաւարումն չկրցաւ արդիւնաւոր կերպով կատարուիլ, վասն զի բաշխման ցուցակներն գրեթէ ամբողջապէս կը պահուին : Իսկ հաշուեցոյցին մէջ երեցած գումարն անձնական գործերով Պատրիարքական զխնդ ազգայիններէ գոյացած է, մեծ մասամբ 'ի հաշիւ իրենց հին պարտոց, և այսպէս արոց արդիւնքէն մինչդեռ 1875-76 տարւոյ մէջ՝ 123, 975 գրուշ գանձուեր էր, անցեալ տարի 92,720 գրուշ գոյացաւ. ըսել է 31,225 գրուշ պահաւ :

Ա. յս պէս ահաւասիկ երբ Կեղրանական Սնտուկն անցեալ տարի կը յաջողէր քանի մը հասցիքներէ, որոնք մեծ մասամբ հին պահանջներ են, 75,76 տարւոյ վրայ՝ 41629 գրուշ աւելի արդիւնք ստանալ, անդին՝ ժամանակին ձախող բերանոց պատճառաւ՝ քանի մը մոխ պարբերութիւնէ 117,410 գրուշի գումար մը կը պահուէր անցեալին համեմատութեամբ, պահաւ մը, որ թէև ձեռք բերուած առաւելութեամբ կը չախուարուէր, սակայն դարձեալ 75781 գրուշն աւելի հասցիք կը ջնջուէր :

Տնտես. Խորհուրդն և Երկտանց Հոգարար ձախութիւնն այսպիսի դժուարութեանց հետ շարունակ մարաւելով՝ մէկ կողմէ կը վճարէին նախորդ 75-76 տարիէն մնացորդ 133 հազար գրուշի պարտքը, միւս կողմանէ՝ Վարչութեան ծախքերը անտեսելու համար կը ջանային դրամ հայթայթել և 'ի պահանջել հարկին՝ յանուն Կեղր. Սնտուկի նաև փոխառութիւններ կը կատարէին անտոկոս, այնպիսի ժամանակի մէջ՝ յորում վարիք ամէնուրեք վերցած էր. և այսպէս կաշխատէին որ դրամական տագնապը Վարչութեան անօրէնութեանց, որոնք փոխուի ժամանակներու մէջ արագ գործողութիւն կը պահանջէին, որ և է կերպով արգել և խտրան չը լինի, և ընդ նմին ձախուց մասին սահմանուած խնայողութիւններէն օգուտ կը քաղէին :

Սնտուկին ձախուց պարբերներն ութ գրուշաւոր տեսակի կը վերածուին. և յանուանէ կը

նշանակուին աստանօր իւրաբանչիւր ճիւղի համար անցեալ տարւոյ մէջ եղած ծախքերը, բազմաթիւ 1875-76 տարւոյ ծախսոց հետ:

Ա. Պատրիարքական թոշակ. 1875-76 տարւոյ մէջ վճարուած գումարն է տարեկան 95000 զրշ, Նորին Սրբազնութեան վրայ ըլլալով կառքին վերաբերեալ բոլոր ծախքերն, ինչպէս նաև խոհանոցին քանի մ'ամսուան մասակարարութեան ծախքն, որ ի վերջէ բոլորովին դադարէ է նախորդ Արշալոյսեան որոշմամբ: Իսկ անցեալ տարի վճարուած գումարն է տարեկան 60000 զուրշ կառքի վերաբերեալ ծախքը վերագրուելով Կեդրոնական Սնտուկին:

Բ. Թոշակ սրաշտոնէութեան, 75-76 տարւոյ մէջ վճարեալ գումարն է տարեկան 248433 զուրշ, անցեալ 76-77 տարւոյ մէջ այս ծախքը 243065 զրշ իջած է, ըսել է Կեդրոնական Սնտուկը 5368 զրշ խնայողութիւն մ'ունեցած է նախընթաց տարւոյ վրայ:

Գ. Նորաստի ամսականը. զորս Կեդրոնական Սնտուկը կը վճարէ քանի մը կարօտ եկեղեցեաց քահանայից, դադարեալ ձերուներ Քարու քէհեաթին. և Ս. Յակոբայ վանուց մէջ ստանջահանուած Պատրիարքարանի հիւրերուն համար Հիւանդանոցի Սնտուկին. մինչդեռ 75-76 տարւոյ մէջ 19700 զրշ վճարուեր է, անցեալ տարի 16109 զրշ միայն ծախք տեղի ունեցաւ. Հիւանդանոցի համար սահմանուած գումարը զեղջուեւուն սրտածառաւ. ըսել է 3591 զրշ սրահաս նախընթաց տարւոյ վրայ:

Դ. Նորաստ Հիւանդանոցի. Կեդր. Սընտուկը Հիւանդանոցի մատակարարութեան գումար մը կը վճարէ ի նորաստ ծախսոց նոյն հաստատութեան, մասնաւորապէս նշանուածութեան և անցողքատան հասոյթներէն, 75-76 տարւոյ մէջ վճարուած նորաստից գումարն է 85004, իսկ անցեալ տարի 55665 զուրշ վճարուեր է նոյն կրկին հաստութից արտադրած գումարին քանակութեան չափով. ըսել է 29339 զուրշ սրահաս:

Ե. Գիւանդանոցի ծախք, կը կազմուի 5 ճիւղերէ, որք են.

1. Գրութեան սլխայք, մինչդեռ 75-76

տարւոյ մէջ այս ճիւղին համար 6328 զրշ ծախք տեղի ունեցած էր, անցեալ տարի 5948 զրշ զեղջուած է այդ ծախքը, 380 զրշ խնայողութեամբ:

2. Թղթատար և հեռագիր, մինչդեռ 75-76 տարւոյ մէջ 13196 զուրշ զուրշ մը ծախք եղած է, անցեալ տարի այս ծախսոց գումարն իջած է 11078 զուրշ, ըսել է 2118 զրշ սրահաս:

3. Տարագրութիւն սրաշտոնական գրուածոց, մինչդեռ 187-76 տարւոյ մէջ 27909 զրշ հասած է այս ճիւղի ծախսոց գումարն, անցեալ տարի 17506 զրշ իջած է, ըսել է 10403 զրշ սրահաս:

4. Լրագրաց բաժանորդագրութիւնք, 75-76 տարւոյ մէջ վճարուած գումարն է 3619 զրշ, իսկ անցեալ տարի 2270 զրշ. ըսել է 1349 զուրշ սրահաս:

5. Փոխադրութիւն տուժարաց ի ժողովատեղիս, 1875-76 տարւոյ մէջ վճարուած գումարն է 1310 զրշ, իսկ այս տարի 1596 զրշ. ըսել է 286 զուրշ աւելի:

Եւ այսպէս գիւանդանոցի ծախքը որ 75-76 տարւոյ մէջ 52363 զրշ զուրշ մը կը կազմէր, անցեալ տարի 38399 զրշ կ'իջնէր, և 13964 զրշ խնայողութիւն մը կը կատարուէր:

Զ. Յարաբերութեան ծախք. կը կազմուի չորս ճիւղերէ.

1. Պաշտօնական երթևեկը Ս. Պատրիարք հօր.

2. Տօնական սրարգև Բ. Գրան.

3. Թոշակ սենեկատանին Բ. Գրան.

4. Երթևեկը բարտարանայ.

Ս. յս չորս ճիւղի ծախսոց համար մինչդեռ Ս. Գր. Ժողովն անցեալ 1876 տարւոյ Փետրվարի նիստին մէջ՝ 300 Օսմ. ոսկոյ գումար մը քուէարկէր էր, անցել տարի յորում՝ սրաշտոնական յարաբերութիւններն այնքան ընդարձակ և բազմազան ընթացք մտներ էին, 26960 զրշ ծախք տեղի կ'ունենար միայն, և նախորդ 75-76 տարւոյ վրայ՝ 1749 զրշ զոյցն վերադրու-

թեամբ կը մատակարարուէր Արշալոյսեան այս մեծ սլխայքը, վերադրութիւն մը, որ ոչ միայն Ս. Գր. Ժողովն սահմանած գումարէն, այլ նոյն խի 75-76 տարւոյ ծախսոց գումարէն նուազ էր, բնդ իրեարս համեմատելով նոյն կրկին տարիներու յարաբերական սրաշտոններն և ծախսոց գումարներուն տարբերութիւնը.

Է. Ընդհանուր ծախք. կը կազմուի 8 ճիւղերէ.

1. Կարասիրէ նորոգութիւն սրաշտոնարանին, մինչդեռ 75-76 տարւոյ մէջ 12100 զրշ գումար մը ծախք եղած էր, անցեալ տարի 936 զրշ եղած է այս ծախքը, ըսել է 11164 զրշ սրահաս:

2. Կարասիրէ ուղարկութիւն և ուղեղնի ծախք, 75-76 տարւոյ այս ճիւղի ծախսոց գումարն եղած է 2119 զրշ, իսկ անցեալ տարի 1519 զրշ միայն վճարուած է. ըսել է 600 զրշ սրահաս:

3. Հանդերձողին բարտարանայ. մինչդեռ 75-76 տարւոյ մէջ այս ծախսոց ճիւղին համար 8665 զրշ գումար մը վճարուած է, անցեալ տարի 4041 զրշով դոյնուած է այս ծախքը, ըսել է 4624 զրշ սրահաս:

4. Վառելեաց և սուրճի ծախք, 1875-76 տարւոյ մէջ Պատրիարքարանի խոհանոցին վերահարուն ստիւն՝ այս ծախքը Կեդր. Սնտուկին վերագրուեր. և նոյն տարւոյ հնգամսեայ միջոցին մէջ 7237 զրշ ծախք տեղի ունեցեր է, մինչդեռ անցեալ տարի այս ծախսոց տարեկան գումարն եղած է 10060 զրշ, որ բազմապատկան հաշուով շատ նուազ է նախընթաց տարիէն:

5. Նշանուածութեան ծախք. որ տեղի կ'ունենայ, Պատրիարքարանի կողմէ տրուած արծաթի և ոսկեղծ խաչերու, տուփի և հարսանեկան ասորագիր կոնդակներու սրաշտոնութեան համար, մինչդեռ 1875-76 տարւոյ մէջ 10094 զրշ եղեր է, անցեալ տարի 8387 զրշ ծախք տեղի ունեցած է. ըսել է 1707 զրշ սրահաս, նշանուածութեան նուազման սրաշտոնաւ նիւթերու նուազ սրահասով տեղի ունենալուն համար:

6. Զանազան ծախք մանուկ, 1875-76 տարւոյ մէջ 8394 զրշ զուրշ գումար մը վճարուած է այս ճիւղի ծախսոց համար, մինչդեռ անցեալ տարի 6275 զրշ իջած է. ըսել է 2119 զուրշ սրահաս:

7. Տոխարի փոխառութեանց. նախորդ մատակարարութեան օրով կատարուած փոխառութեան համար 1120 զրշ սոկոս վճարուած է անցեալ տարի:

8. Կառքի ծախք. որ 1875-76 տարւոյ մէջ Սրբազան Պատրիարք Հօր կը վերաբերէր, անցեալ տարի Կեդր. սնտուկին հաշույն վերագրուելով՝ ինձամսեայ միջոցի մէջ 16,316 զրշ ծախք եղած է:

Եւ այսպէս անցեալ տարի ընդհանուր ծախսոց ճիւղին բաժանորդակ գումարն եղած է 48,656 զրշ, մինչդեռ 75-76 տարւոյ մէջ 48609 զրշ վճարուած է, ըսել է նոյն քանակութեամբ, կառքի ծախքն ալ ի նորոգ յաւելցած ըլլալով հանդերձ:

Ը. Տասնորդական վարձք, որ կը վճարուի հաւարիչներու արոց հաւարածոց արդիւնքէն, 75-76 տարւոյ մէջ 5995 զրշ վճարուեր է Սնտուկէն, իսկ անցեալ տարի 4883 զրշ, որ մեծ մասամբ 75-76 տարւոյ մէջ եղած հաւարչութեան հաշուէն մնացորդ գումար մ'է, և հաշուակցութիւնն անցեալ տարի կատարուած:

Թ. Սրտաբոց կարգի ծախք. 75-76 տարւոյ մէջ.

1. Հայտատանի աշխարհացոյց տախտակաց շինութեան համար 5600 զրշ.

2. Կալուածական արձանագրութեանց համար 3890 զրշ.

3. Զնտանի բանտարիկեց ուղարկութեան համար 2374 զրշ, ընդամենը 11,864 զրշ ծախք մը տեղի ունեցեր է. իսկ անցեալ տարի միայն յանուն Զնտանի բանտարիկեց գանձուած 1268 զրշ գումարը բաշխուած է, ըսել է 10596 զրշ սրահաս եղած է այս ծախսոց ճիւղը:

Եւ այսպէս 76-77 տարւոյ մէջ Կեդր. Սընտուկին բաժանորդակ ծախսոց գումարն կը ըլլար 495005 զրշ, հաշուելով ի միասին Հիւանդանոցի

և զանազանոց տրուած նորաստի անասանոց գուժարն . մինչդեռ 75-76 տարւոյ Մնտուկին ծախքն եղած էր 592,182 դրուչ, որով ընդհանրապէս հարկւր հազար դրուչի մաս խնայողութիւն մը կը կատարուէր :

Կեդր. սնտուկն անցեալ տարի գանձած է 452,728 դրուչ, իսկ իւր տարեկան ծախքը 495005 դրուչի կը հասնի, ըսել կըլլայ որ այս տարուան **Կեդր.** Մնտուկին պարտքը սխալի բլար միայն 42,277 դրուչ, եթէ չարտատուորէր նախորդ մաստարարութեանն մնացորդ պարտքը գրեթէ ամբողջապէս հատուցանել հաւաքածոց հասոյթին :

Այսպէս ուրեմն Կեդր. սնտուկը 75-76 տարիէն մեծագուժար պարտք մը ժառանգելէ, և նոյն տաւոց վրայ հասոյթի մեծ գումարէ մը գրկուելէ ետե՛ կը թողու միայն 182,682 դրուչ պարտք մը, որ չսխալի դոյանար եթէ հասոյթից այդ նուազումը տեղի չունենար, կամ եթէ տրոյ բաշխման ցուցակները պատրաստուելով՝ կանանաւոր հաւարում մը կատարուէր . և կամ գոնէ 76 — 77 տարւոյ հասոյթներն ամբողջապէս գանձուէին : Ինչ որ ալ լինի, **Տնտես.** **Խորհուրդը** և **Ելեւոսից Հոգարարածութիւնն** հաշիւ ի ձեռին գիտել կուտան **Պատկասելի Ժ.** զովցդ՝ որ 76 — 77 ի պէս ձախողութեամբ լի տարւոյ մը մէջ կարելի չէր ուրիշ վիճակ մը ունենալ և կը կարծեն որ խեղց ջանադրութիւններն ծառայեցին զէթ այդ ճգնաժամին շարիքը մեղմելու, և **Վարչութեան** պիտոյքներն առանց բարձի թողի մնալու կրցան մատակարարուիլ :

Կը մնայ ոյժով գիտնուլ թէ ինչ միջոց կոյ մանաւորապէս այդ պարտքը սրբելու համար :

Ա. **Կեդր.** Մնտուկը նախորդ տարիներու մագաթոյցի և քանչելերի յետնեալ տարբերէն 184892 դրուչ պահանջ մ'ունի, որու վրայ պէտք է յաւելուլ նաեւ 76 — 77 տարիէն մնացորդ 68932 դրուչ պահանջից գումարն ալ, ընդ առմենն 253824 դրուչ : **Այս** պահանջներն ամէն տարի մաս առ մաս կը գանձուին, և ազրիւր մը կը կաշիւեն այդ մնացորդ պարտոց զէմ :

Բ. Բոց տասի՛ Մնտուկն ունի նաեւ 615446 դրուչ գանադան հին պահանջներ, և թէկզեւ այդ գումարէն մեծ մաս մը ջնջելի է, սակայն կոյ մաս մ'ալ, յորմէ գանադան ժամանակներ՝ ինչպէս նաեւ անցեալ տարի՛ փոքր ի շատէ մէկ մէկ գումար կը գանձուի միշտ . և անգուլ հետամտութիւն մ'ամուլ չմնալով կրնոյ անտի գումար մ'օգտիլ, որու քանակութիւնը չէ կարելի ճշդիւ ի հաշիւ արկանել, այլ ջանադրութեան աստիճանէն կախում ունի : **Այս** ալ կրնոյ ազրիւր մ'ըլլալ՝ արարտոց բարձման նորաստելու համար :

Գ. **Տրոյ** հաւարումն որքան ալ ներկոյ տարւոյ մէջ նոր գրութեամբ կատարուիլ սխալ, սակայն 75 և 25 դրուչ տրոյ հաշուէն՝ ըստ տուժարոց ազդոյցներ մեծագուժար պարտք ունին դեռ՝ նախընթաց տարիներէ մնացորդ, որոնք չեն ջնջուիր և գանձուի են միշտ և տարուէ տարի կը հաւարուին մաս առ մաս, և ահաւասիկ ուրիշ ազրիւր մ'ալ **Մնտուկին** մնացորդ պարտոց զէմ :

Արժան է աստ գիտել թէ պէտք է **Կեդր.** սնտուկին վիճակը ծոյտող՝ հին պահանջմանց և արարտոց հաշիւները՝ մանրակրկիտ քննութեան մը բովէն անցնին, և ինչ որ իրական պահանջ մ'է կամ պարտք, զտուելով երևան ելնէ և նըշանակուի տուժարոց մէջ :

Տնտեսական Խորհուրդն այս բացատրութիւնները բաւական կը դատի հաշուեցոյցն մասին և կանցնի ներկոյ 77-78 տարւոյ հաշուէլին նկատմամբ քանի մը խօսք ընելու, որու վրայ արդէն պոյժառ լուսարանութիւն մը կուտայ անցեալին հաշուեցոյցը :

Տնտեսական Խորհուրդն անցեալ տարւոյ փորձն իւր աչաց առջև ունենալով՝ իրաւունք ունի կարծելու որ ժամանակիս ձախող պարագաները պիտի տեւեն տակաւին, և թերես ստականալով ներկոյ տարւոյ մէջ, **Մնտուկին** հասոյթներն՝ այնեալին համեմատական հաշուով աւելի կարճեն, հետեալպէս անպատեհ գատած է հասոյթներն առաստիւն ենթադրելով՝ **Մնտուկին** վիճակը կեղծել :

Այս անստեղծամբ քանի մը զխաւոր հա-

սոյթներ նոյն խոյ անցեալ տարւոյ մէջ գոյոցեալ արդեանց քանակութեանն նուազ չափով ենթադրած և ի հաշիւ դրած է, միայն քանի մը անագրակի տարբեր, որոց քանակութիւնը սահմանեալ է, որոշեալ գումարին քանակութեան մէջ պահելով :

Ինչպէս պատկասելի **Ժողովք** հաշուէլին մէջ պիտի տեսնէ .

Ա. **Մագաթոյ** և քանչելերի տարբերք իրենց տարեկան յատկացեալ գումարին չափովն անցուցած է, սակայն տարեկան 94930 դրուչ և կրկնորդը 24890 դրուչ նշանակելով . պատճառն, վասն զի անպատեհ թուած է իրեն գուտական և թաղոյն սնտուկներուն վրայ որոշեալ չափով սահմանեալ տարբեր՝ հաշուէլին մէջ զեղջմամբ անցնել, որոնք թէև միեւնոյն տարւոյ մէջ ամբողջապէս չեն մոններ **Մնտուկը**, սակայն յետնեալ մասը յաջորդ տարիներու մէջ կը գանձուի, ինչպէս կապուցուցանէ անցեալ տարւոյ հաշիւը :

Բ. **Անցադրատուն** հասոյթն անցեալ տարւոյ մէջ 25,644 դրուչ արդիւնք բերելուն՝ 25000 դրուչ նշանակուած է հաշուէլին մէջ :

Գ. **Վագֆի** հասոյթին անցեալ տարւոյ մէջ 77,590 դրուչի գումար մը գոյանալուն՝ այս տարի զեղջմամբ 60000 դրուչ նշանակուած է :

Դ. **Նշանատուութեան** հասոյթն՝ որ անցեալ տարի 69,590 դրուչ եղած էր . 50000 դրուչ նշանակուած է այս տարի :

Ե. **Նոյնպէս Պատկադրութեան** հրամանի հասոյթն 20,454 դրուչն 15000 դրուչի զեղջուած է .

Զ. **Պիւանական** հասոյթն 5076 դրուչն 5000 դրուչի զեղջուած և սցնդէս նշանակուած է հաշուէլին մէջ :

Է. **Պատական** վճատորի հասոյթը յորմէ անցեալ տարի 1415 դրուչ գոյացել էր . այս տարի 1500 դրուչ նշանակուած է .

Ը. **Միջոց** և վախճանմանց հասոյթն անցեալ տարի 55 դրուչ արդիւնք տեսել է և այս քարի այս ազրիւրէն գանձելի գումար մը նշա-

նակուած է հաշուէլին մէջ :

Արդարեւ ծննդեան հասոյթը արդիւնաւոր դարձելու և միանգամայն հանրական կարեւոր պէտք մը լեցնելու նորատարու՝ որոշուած է արդէն հաւարելի հասոյթից տեղ՝ վախճանակ պարզ ընկալադրի՝ **Պատրիարքարանի** կողմէ սրտառատուած տպագիր և միաձեւ ծննդեան վրայագրեր տալ, յանուն նորածին մանկանց, և **Տնտեսական Խորհուրդն** արդէն այս մասին հրահանգ ընդունելով՝ գործադրութեան միջոցներն անորիճելու վրայ է, որով յուսով է որ բուտական գումար մ'առանայ **Ազգ.** **Մնտուկը**, բոց գործադրութիւն չդրած անորիճութեան մը վրայ՝ սրտառած է գատուած հասոյթ ենթադրել, և առ ոյժով գանց ըլլալով սրէ, քանակութեամբ գումար մը նշանակել, վարձատուութեան թաղուած է անոր քանակութեան չափը ճշտել :

Թ. **Կոնդակատարը** նախորդ տարւոյ մէջ 2728 դրուչ գոյացել է, այս տարուան համար 2500 դրուչ նշանակուած է .

Ժ. **Ղրօշմաթղթի** արդիւնքն անցեալ տարւոյ գումարի քանակութեան չափովը՝ 700 դրուչ նշանակուած է :

ԺԱ. **Ազգ. Ժողովոյ** տանադրութեան տեւորակներուն տարագրութիւնը վերատին **Կեդր.** սնտուկի հաշուին կատարել հարկ գատուած լինելուն՝ նախորդ տարուան վրայ՝ համեմատական հաշուով 3000 դրուչ արդիւնք նշանակուած է .

ԺԲ. **Արտարոց կարգի** հասոյթից համար որեւէ գումար չէ սահմանուած, կարելի չըլլալով այս մասին ենթադրութիւն մ'ընել ինչպէս նաեւ **Զնտանի** թաղախի հասոյթից համար :

Եւ այսպէս հաշուելով **Կեդր.** **Մնտուկի** մէն մի հասոյթ, ընդհանուր գումարն եղած է 282,430 դրուչ, որ անցած է հաշուէլին մէջ, իրոց ստեալ **Ազգ. Տարբեր** : Իսկ ծախուց գալով հաշուէլին մէջ նշանակուած են **Կեդր.** **Մնտուկին** արդիւնք սահմանեալ ծախքերն անցեալին համեմատական հաշուով ու սրտառած գատուած քանի մը վախճանակներով : Իսկ ի նորայ միայն **Ուսումնական** և **Վախճանից** խորհուր-

դոյ համար մէկ մէկ դուանար սահմանուած են :

Պատկառելի Ժողովոյց հրահանգին համաձայն Տնտես. Խորհուրդը Վարչութեան այս կրկին ճիւղերէն յատկապէս տեղեկութիւն խնդրած էր իրենց պիտայից և կարօտութեան նկատմամբ, որոնք Տնտես. Խորհրդոյ պատասխանելով տեղեկագրած էին ինչ պիտոյք որ իրենց պաշտանան ճիւղին մէջ զգալի եղած էր, և ինչ դուանար որ հարկուար կը թուէր այդ պէտքն հոգալու համար :

Ուսումնական Խորհուրդը՝ տարեկան 120000 դրուչի դուանարի մը կարօտութիւն ցոյց կուտար, սակայն ՚ի յուշ անկելով Կեդր. Սնտուկին արդի անձուկ վիճակը, կը չստիւարէր ինքնին այդ դուանարը, և սակայն 5550, այն է տարին 65000 դրուչ կը խնդրէր :

Այս դուանարէն առաջին՝ սակայն 3500 դրուչ յատկացուցնելով՝ Ակադեմիա մը կը ցանկար հիմնել, շրտ անդամէ բաղկացեալ և յատուկ զխանով, Ակադեմիայի անդամոց 20000 դրուչ և զխանին 1500 դրուչ ամսական թուշակ նշանակելով. երկրորդ՝ վարժարանաց մասին խր ըրած անօրէնութեանց գործադրութիւնը ազգակի հսկողութեան մը ներքե տանելու համար՝ ընդհանուր տեսչի մը պէտք ցոյց կուտար, և 1500 դրուչ ամսական թուշակ կը նշանակէր, երրորդ՝ Ուսումնական Խորհրդոյ զանազան մանր մանր ծախուց համար սակայն 500 դրուչ պէտք կը նշանակէր :

Իսկ Վանօրէից Խորհուրդը՝ թէև նորակազմ և բընապէս դեռ անտեղեկ իւր բովանդակ պիտոյից, սակայն իւր նախարդին փորձառութեամբը Վանօրէից ընդհանուր տեսուչ մը սահմանելու պէտք ցոյց կուտար, որոյ պաշտօնը պիտի վին վանքերն այցելել, Վանօրէից բարեկարգութեան համար պատրաստուած հրահանգաց գործադրութեան հսկել, անոնց կայտութեան նկատմամբ վիճակագրական տեղեկութիւններ պատրաստել, և այս նպատակին և որիչ մանր մանր ծախուց սահմանելու համար՝ տարեկան 18000 դրուչի դուանար մը կը խնդրէր :

Ուսումնական Խորհրդոյ առաջարկած պիտոյից առաջինն, այն է Ակադեմիայի մը կազմութիւնը, թէև նկատազուրկեան արժանի, սակայն արդի արարագոյնց մէջ Կեդր. Սնտուկին

կարողութեան վեր ըլլալով՝ վարժարանու Ակադեմիա մը պահել. Տնտես. Խորհուրդն այս մասին Պատկառելի Ժողովոյց կարծիքն և որոշումը խնդրելէ ետև՝ հաշուեկշիւն մէջ որեւէ դուանար մը չկրցուտահմանել, իսկ վարժարանաց տեսչին համար խնդրուած տարեկան թուշակն 18000 դրուչ նշանակեց հաշուեկշիւն մէջ. ՚ի բաց թողալ միանգամայն մանր մանր պիտոյից համար խնդրուած դուանարը, որոյ համար յատուկ դուանար աւելորդ էր նշանակել հաշուեկշիւն մէջ. վասն զի սահմանեալ ընդհանուր ծախուց ազդիւնն Կեդր. Սնտուկը կրնայ մատարարարել այդ պիտոյքը :

Իսկ Վանօրէից Խորհրդոյ առաջարկութիւնը՝ տեսչի մասին՝ ընդունելով, տարեկան 12000 դրուչի դուանար մը նշանակեց հաշուեկշիւն մէջ, ինչպէս Պատկառելի Ժողովոյց յանձնարարեց, աւելորդ դատելով նոյնպէս մանր մանր ծախուց համար դուանար մ'իւս սահմանել զորս Կեդր. Սնտուկը ՚ի հարկին կրնձեռէր :

Այս տարուան Կեդր. Սնտուկի ծախքերն են .

Ա. Սրբազան Պատրիարք Զօր ամսականը նախարդ տարուց որոշեալ քանակութեան համաձայն՝ ամսական 5000 դրուչէն տարեկան 60000 դրուչ նշանակուած է հաշուեկշիւն մէջ :

Բ. Պաշտօնէութեան վճարեալ թուշակն էր նախարդ տարուց մէջ՝ 243,065 դրուչ, այս դուանարէն ըստ վերջին կարգադրութեան 6000 դրչ զեզուելով՝ պաշտօնէութեան վճարուած արդի թուշակաց տարեկան դուանարն եղած է 237,000 դրուչ՝ ամսական 19,750 դրուչէն հաշուելով, սակայն պատշաճ համարուելով՝ հաւանական նոր հարկի՝ մ'առջև անպատրաստ չգտնուելու համար զէթ 3000 դրուչի տարեկան դուանար մը վերապահել Վարչութեան, յանուն պաշտօնէութեան վտանակ 237,000 դրուչի 240,000 դրուչ նշանակուած է հաշուեկշիւն մէջ, աւելորդ 3000 դրուչն իրրե պահեստի դուանար դնելով՝ Վարչութեան արամագրութեան ներքե :

Գ. Նորաստի ծախուց համար նշանակուած է հաշուեկշիւն մէջ 15000 դրուչ յարմէ վճարելի է 1՝ ըստ առաջնայն անխախտ նախկին ձևուանի բարութիւնեան 500 դրուչի հանդստի թուշակ

կը, 2էք Պէտլերի և Սհեօրու պարկողի քաշտուայից 250 դրուչի թուշակը, և 3էք Եկտիբալի Սարր Զոհրոյց վանուց յատկացեալ 500 դրչի ամսականը :

Գ. Հիւանդանոցի Սնտուկին վճարելի նըսրասի դուանարը նշանատութեան և անցորտան հաստթից համար ենթադրեալ քանակութեան չափով 46000 դրուչ նշանակուած է .

Ե. Վիսանական ծախքն՝ որ 38,399 դրուչ եղած է նախարդ տարին, այս տարուան համար 45,770 դրուչ ենթարկուած է, վասն զի Ազդ. Ժողովոյ տակնագրութեանց տարագրութիւնը ըստ առաջնայն Պատրիարքարանի կազմէ կատարել, և տակնագրութիւններն երեւոյթաւանաց ցրուել հարկ ըլլալով՝ տարագրութեան ջնջուած ծախքը նորոգուած և զիսանական ծախուց լծիւղին մէջ տարագրութեան համար 25000 դրուչ նշանակուած է .

Զ. Զարարեալութեան ծախուց համար վըճարուած է անցեալ տարի 26960 դրուչ. իսկ այս տարի 27600 դրուչ ենթարկուած է դոյնն ինչ վերագրութեամբ :

Է. Ընդհանուր ծախուց դուանարն՝ որ անցեալ տարի 48,656 դրուչ եղած էր, ներկայ տարուց հաշուեկշիւն մէջ 48000 դրուչ ենթադրուած է քանի մը մանր փոխախախտութեամբ :

Ը. Զնտանի բանտարկելոց համար ինչպէս հասցիթ, նոյնպէս ալ ծախք նշանակուած է :

Թ. Ուսումնական Խորհրդոյ համար տարեկան 18000, իսկ Վանօրէից Խորհրդոյ համար 12000 դրուչ նշանակուած է, ըստ յանձնարարութեան Ժողովոյց :

Ժ. Կեդրական ընդհանուր տրոց տասնարդը նոյն հասցիթէն ենթադրեալ դուանարին քանակութեան համեմատական հաշուովը 22,944 դրուչ նշանակուած է, մինչդեռ անցեալ տարի 4883 դրուչ միայն վճարուած է :

Եւ այսպէս հաշուելով Կեդր. սնտուկին ներկայ տարուց մէջ անենուայի ծախքն՝ 535314 դրչ նշանակուած է ելից բովանդակ դուանարը, 282,430 դրուչի մոխց զէմ. որու տարբերութիւնն կրնէ 252,884 դրուչ որու զէմ ցոյց տրուած է Կեդր. ընդհանուր տարրը :

Կեդր. Սնտուկին թէ մոխց և թէ ելից այս ենթադրական դուանարները պէտք է բնական թէ զթագրուած հարկի դրուչի հաշուով, ինչպէս որ անցեալ յանուար ամսոյ սկիզբէն ՚ի վեր Պատրիարքարանը նոյն գնով սկսած է Կեդր. Սնտուկին հասցիթները գանձել, նկատելով որ թրչթագրութեան օրինուար զինք հարկի դրուչ է, և նոյն արմէրով կրնգունին Տէրութեան ամեն կարգի պաշտօնատանց ճիւղերը :

Արդ՝ ինչպէս որ Պատկառելի Ժողովոյ այս ամէն բացատրութիւններէն լիովին կը տեղեկանայ, Տնտես. Խորհուրդն և Կլիմայի Զոգարարութիւնն միշտ ենթադրելով որ հաստթից նուազումը տակաւին ընդ երկար պիտի տեւէ, իրենց սովորական քանակութեան շատ նուազ ենթադրած, և այնպէս անցուցած են հաշուեկշիւն մէջ :

Եթէ այս վիճակը ժամանակին փոխախտութիւններն ի ըստ անոր յեղաշրջեն, ներկայ տարուց մէջ կ'սկսին անշուշտ հասցիթներն իրենց նախկին վիճակին վերագտնուել, և գրամական ճրգնամամէն հեռուած երևոյթական գծուարութիւններն բանտարով այս վիճակը բարոյրել : Սակայն ինչ որ ժամանակը կրնայ բնէլ ժամանակին թողալ, պէտք է նուե ամեն ջանք ՚ի գործ դրնել Ազդ. տրոց հաւարումն ընդարձակելու, որ Կեդր. Սնտուկին հաստթից զլիուար ազդիւնն է ժամանակ եղած է որ Ազդ. տարրէն տարին մինչև 170 հազար դրուչ գանձուած է, հին դրութեամբ հաւարուելու արցմանու, և զիւրին է գուշակել թէ այս հասցիթն որքան կրնայ առատանալ, երբ հաւարումն օրինուար գրութեամբ, կանոնաւորապէս և ընդհանուր կերպով կատարուի, և ամէն ազգային անհատ՝ չափահաս ու վատասակի տէր՝ ըստ Մահմանագրութեան մասնակցի նիւթապէս ազդին ծախուց և մանուանդերը հաւարման մասին հարկ եղած բարոյական ամէն միջոցներն ՚ի գործ դրալին :

Տրոց բաշխման և հաւարման խնդիրները ըստ է Ազդ. Ժողովը իւր զերագոյն հեղինակութեամբ և մնացած է միայն գործադրութիւնը, որ թէև ՚ի սկզբան գծուարութիւններով վրտակայն անդրադուելի յարատեւութեամբ երբ մի-


անդամ կարելի լինի սխալ. արդիւնքն անժրխանելի է : Արդէն արոյ բաշխման պատրաստի ցուցակոյ համաձայն հաւարումն սկսուած է, հաւարչութիւնը զիրեւա և կանոնադրելու համար երեք շրջանակ օրոշուելով և իւրարանջիւր շըրջանակի համար մէկ մէկ երաշխաւորեալ հաւարիչ սահմանուելով, որանք ձեռն ՚ի գործ արկած են :

Կեդրոնական Կնտուկին վիճակն առաջին հայեցումով որբան դժուարին երեի. սակայն սկսար է զխաւել որ մեր Ազգ. Վարչութեան սահմանադրական կողմակերպութեան մէջ, որ բարոյական անհամեմատ առաւելութեանց հետ յարակից ծախքեր ալ ունի, Կեդր. Արնատեկին բովանդակ ելքը տարեկան հազիւ 500000 գրուշի գումար մը կը կազմէ, որով Պատրիարքարանն ազգային հանրական գործոց վերաբերեալ

եալ խել մը ծախքեր հոգայէ ետե՛ր տակաին նպաստ մ'ալ կը մտաուցանէ ազգային Հիւանդանոցին : Այսպիսի գումար մը կը գորեն հոյթայթեւ Կեդր. սնտուկի հասոյթներն և մանաւանդ Կեդր. սարքը, միայն թէ գործնական և լուրջ միջոցներ և յարասեւթիւն ջանից հարկուոր են :

31 Մայիս 1877 Մեակը յարգանք
 ՚ի Պատնայ Տնտեսական Խորհրդոյ

Ստեփանոսյի Կանկոսյիս
 Պ. ԵՐԼՏԸԶԵԱՆ Ե. ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ
 ՚ի Պատրիարքարանի Հոյոց
 Կ. Պոլիս



▶▶▶▶▶ 6324444 ▶▶▶▶▶

3
 76
 30



ԿՐԾՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

- | | | | | |
|--------------|----------|---|---------------|------------|
| 1. Խորէն | Եղիակ | • | Մխիթարեան | Ա. ԱՏՆԱԳՅՏ |
| 2. Յակոբ | Վարդ | • | Փափաղեան | Ա. ԱՏՆԱԳՅՏ |
| 3. Գէորգ | Ա. Գ. Ք. | • | Արծրունի | Բ. ԱՏՆԱԳՅՏ |
| 4. Խաչատուր | » | » | Տ. Գարրիելեան | Բ. ԱՏՆԱԳՅՏ |
| 5. Գարրիել | » | » | Չիչիքեան | |
| 6. Յովհաննէս | » | » | Մկրեան | |
| 7. Արխատակէս | » | » | Քարակոթրիկի | |
| 8. Պետրոս | » | » | Փափաղեան | |
| 9. Իգնատիոս | » | » | Մանափեան | |
| 10. Գրիգոր | » | » | Սէթեան | |
| 11. Աթանաս | քհնյ | • | Ս. Խաչ յիւսկ | |
| 12. Մեսրոպ | » | » | Երկրեան | |
| 13. Միքայէլ | » | » | Պալատու | |
| 14. Զարարիա | » | » | Բերայի | |

1. Գրքեր	•	Գրքեր	•	1
2. Գրքեր	•	Գրքեր	•	2
3. Գրքեր	•	Գրքեր	•	3
4. Գրքեր	•	Գրքեր	•	4
5. Գրքեր	•	Գրքեր	•	5
6. Գրքեր	•	Գրքեր	•	6
7. Գրքեր	•	Գրքեր	•	7
8. Գրքեր	•	Գրքեր	•	8
9. Գրքեր	•	Գրքեր	•	9
10. Գրքեր	•	Գրքեր	•	10
11. Գրքեր	•	Գրքեր	•	11
12. Գրքեր	•	Գրքեր	•	12
13. Գրքեր	•	Գրքեր	•	13
14. Գրքեր	•	Գրքեր	•	14

ԳԻՆ 2 ՂՐՈՒՇ

ՄԵՓՈԿԱՆՈՒԹԻՒՆ ԿԵՐԴՈՆԱԿԱՆ ՄԵՏՈՒԿԻՆ

ՍԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ ԾԱԽՈՒՅ ՅԱՏԿԱՅԵՍԼ

Կը ծախուի ի Դիւանատան Պատրիարքարանի . և Ղալաթիոյ Ս
Լուսաւորիչ Եկեղեցւոյ բանկալը և Հայ դրամաճառաց քով: